ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՍԸՆԹԱՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՍԸՆԹԱՑ ԴԱՍԸՆԹԱՑԱՎԱՐԻ ՁԵՌՆԱՐԿ

Սույն Ձեռնարկը հանդիսանում է «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ի սեփականությունը: Ձեռնարկը հանդիսանում է 2003-2025թթ. «Մարդու իրավունքների» դասընթացների տեսական և գործնական նյութերի ամփոփում և վերաթողարկվում է 3րդ անգամ: Սույն վերանայված ձեռնարկը ընդլայնել է յուրաքանչյուր թեմայի շրջանակներում քննարկվող խնդիրների շարքը և համապատասխանեցվել կանանց իրավունքների ներկայիս մարտահրավերներին:

2003թ.-ից սկսած կազմակերպությունն իրականացնում է կանանց իրավունքներին նվիրված 6 մասից բաղկացած դասընթացների շարք, որի նպատակն է իրազեկել վերջիններիս և աջակցել կանանց նկատմամբ խտրականության տարբեր ձևերի դեմ սեփական պայքարի ու դիմադրության ձևավորմանը Հայաստանում:

«Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ն իր խորին երախտիքն է հայտնում «Մարդու իրավունքների» դասընթացների մասնակիցներին, որոնք մասնակցելով այս դասընթացներին՝ կիսել են իրենց սեփական փորձառությունը և գիտելիքները կանանց իրավիճակի վերաբերյալ: «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ն նաև շնորհակալություն է հայտնում 2003-2025թթ. «Մարդու իրավունքների» դասընթացների դասընթացավարներին, որոնք մեծ ներդրում են ունեցել և շարունակում ունենալ դասընթացի հաջողված պատմության կերտման համար:

ՆԱԽԱԲԱՆ

«Այս դասընթացի շնորհիվ, ես վերաիմաստավորեցի իմ դերը իմ ընտանիքում և ավելի լայն՝ հայրիշխանական հասարակությունում, հասկացա, թե ինչով եմ ուզում զբաղվել և ընտրեցի այնպիսի աշխատանք, որը կօգներ ինձ պայքարել արմատացած գենդերային անհավասարության դեմ Հայաստանում: Այս դասընթացը վստահաբար օգնում է կոտրել քո ներսի գենդերային կարծրատիպերը, տալիս է գիտելիքներ և հմտություններ մարտահրավեր նետելու հայրիշխանական մշակույթին»

2014թ. «Մարդու իրավունքների» դասընթացի մասնակից

«Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ն (այսուհետ՝ ԿՌԿ) դեռևս 2003թ.-ից՝ իր հիմնադրման և գործունեության ծավալման առաջին օրվանից մինչ օրս, առաջարկում է «Մարդու իրավունքների» դասընթացների շարք, որի նպատակն է ոչ միայն իրազեկել և տրամարդել նոր գիտելիքներ կանանց տարբեր իրավունքների իրացման, ոտնահարումների և դրանց՝ կանանց կենսագործունեության ազդեցության վերաբերյալ, այլ նաև ստեղծել ապահով տարածք, որտեղ մասնակիցները կկարողանան բարձրաձայնել այն համակարգային խտրականության, ճնշումների և սահմանափակումների մասին, որոնք խոչընդոտում են իրենց լիարժեք գործառնել հասարակության մեջ: Այս դասընթացների շարքը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր մասնակցին կանանց իրավունքների, պայքարի պատմության վերլուծության միջոցով կառուցել և ուրվագծել հայրիշխանության դեմ սեփական պայքարի ուղին: Սրա մասին է փաստում ոչ միայն կազմակերպության հիմնադիրներ՝ Լարա Ահարոնեանի ու Գոհար Շահնազարյանի ունեցած տեսլականն՝ առաջին դասընթացները կազմակերպելիս ու անցկացնելիս, այլ տարեց տարի չպակասող պահանջարկն այս դասընթացների մասնակիցների շրջանում:

Սույն Ձեռնարկի նպատակն է «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ի 6 բաժիններից բաղկացած՝ «Մարդու իրավունքներ» դասընթացներ շարքի դասընթացավարներին տրամադրել համապարփակ տեղեկատվություն և ուղեցույց դասընթացների կազմակերպման համար: Դասընթացի թեմաներն են.

- Մարդու իրավունքներ, կանանց աշխատանքային իրավունքներ և կանանց քաղաքական մասնակցություն
- Գենդեր

- Գենդերային բռնություն
- Ֆեմինիզմ,Սեռական և վերարտադրողական առողջություն և իրավունք (ՍՎԱԻ)
- Կանայք, խաղաղություն և անվտանգություն

Յուրաքանչյուր բաժնում ներկայացված է դասընթացների պլանավորումը՝ ուսուցանվող թեմաները, քննարկումների համար հարցեր և խմբային աշխատանքների համար վարժություններ, իսկ Հավելվածում դասընթացավարները կգտնեն օգտակար ռեսուրսներ և գրականության ցանկ դասընթացների կազմակերպման համար:

Դասընթացների նպատակն է մասնակիցներին փոխանցել տեսական գիտելիքներ, ինչպես նաև ներկայացնել այն գործիքակազմը, որ մասնակիցները կարող են օգտագործել շահերի պաշտպանության և ակտիվիզմի համար՝ յուրաքանչյուր բաժին կառուցված է այս տրամաբանությամբ: Այս դասընթացներն անցնելուց հետո մասնակիցները ամբողջական պատկերացում կկազմեն դասընթացի ժամանակ քննարկվող թեմաների վերաբերյալ և կծանոթանան գենդերային հիմնախնդիրների բարձրաձայնման և գենդերային հավասարությանը նպաստելու ակտիվիստական մեխանիզմների հետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ, ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ 5

ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 6

ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՔՎՈՏԱՆԵՐ 7

ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 9

ՖԵՄԻՆԻԶՄ 10

ԳԵՆԴԵՐ 17

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ 21

ՍԵՌԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ 27

ԿԱՆԱՅՔ, ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ 35

ՀԱՎԵԼՎԱԾ. ԴԱՍԸԹԱՑԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԿԱՐ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 45

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ, ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Նպատակ՝

Հաղորդել մասնակիցներին գիտելիք մարդու իրավունքների, գենդերային հավասարության, կանանց նկատմամբ խտրականության, աշխատանքային իրավունքների և կանանց քաղաքական մասնակցության վերաբերյալ՝ հիմնվելով ներպետական և միջազգային իրավական փաստաթղթերի վրա:

Առաջին մաս (Տևողությունը 1.5 ժամ)

Մեկնարկ՝
Դասընթացի սկզբում դասընթացավարը հարցնում է մասնակիցներին թե ի՞նչ գիտեն նրանք մարդու իրավունքների մասին և ինչպես են այն սահմանում: Սա կօգնի դասընթացավարին հասկանալու թեմայի մասին խմբի տեղեկացվածության մակարդակը: Մասնակիցների պատասխանները լսելուց հետո, դասընթացավարը տալիս է մարդու իրավունքների սահմանումը և քննարկում այն մասնակիցների հետ:

Մարդու իարվունքները յուրաքանչյուրիս՝ արժանապատիվ կյանքով ապրելու համար անհրաժեշտ սոցիալական ստանդարտներ և իրավական երաշխիքներն են:

Այն սահմանելուց հետո դասընթացավարը անդրադառնում է մարդու իրավունքների առանցքային արժեքներին՝ հիմնականում շեշտադրելով, որ դրանք պատկանում են յուրաքանչյուրիս՝ առանց խտրականության (սեռ, տարիք, մաշկի գույն, ռասա, սոցիալական պատկանելիություն, կրոն, քաղաքական հայացքներ և այլն):

Այնուհետև դասընթացավարը ներկայացնում է մարդու իրավունքները պաշտպանելու պետության պարտականությունները՝ նեգատիվ և պոզիտիվ, բերում օրինակներ, անցում կատարում իրավունքների տեսակներին (քաղաքական և քաղաքացիական իրավունքներ, տնտեսական, սոցիալական, մշակութային իրավունքներ) և ձևակերպում մարդու բացարձակ իրավունքները:

Սրանից հետո դասընթացավարն անդրադառնում է նաև ներպետական ամրագրումների (ՀՀ Սահմանադրություն, հոդված 3, ՀՀ Սահմանադրություն, գլուխ 2,3, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարություն) և մարդու իրավունքների տեսանկյունից պետության պարտավորություններին՝ շեշտադրելով որ պետությունը պարտավոր է հարգել, պաշտպանել, իրացնել և խթանել մարդու իրավունքները:

ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Մարդու իրավունքների համատեքստը քննարկելուց հետո դասընթացավարը հարցնում է մասնակիցներին, թե ինչու են առանձնացնում կանանց իրավունքները մարդու իրավունքների համատեքստում: Ծավալվում է քննարկում, մասնակիցները հայտնում են իրենց կարծիքները և դասընթացավարը նշում է, որ կանայք պատմականորեն ունեն խոցելիություն մի շարք ոլորտներում, ներառյալ ընտանեկան բռնությունը, խտրականությունն աշխատանքում ու քաղաքական կյանքում, վերարտադրողական իրավունքների սահմանափակումները և այլն: Ուստի առանձնացումը պայմանավորված է առանձնահատուկ կարիքներով և հատուկ պաշտպանության մեխանիզմների անհրաժեշտությամբ:

Այնուհետև դասընթացավարը հակիրճ ներկայացնում է կանանց իրավունքներին առնչվող միջազգային և ներպետական փաստաթղթերը.

- Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր:
- Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա (CEDAW)
- Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիա
- ՀՀ Սահմանադրություն, «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենք, ՀՀ աշխատանքային օրենսգիրք, ՀՀ ընտրական օրենսգիրք …
- ԱՄԿ 111, 183, 190 կենվենցիաներ:

Դասընթացավարն այստեղ հատուկ շեշտադրում է CEDAW 11-րդ հոդվածն ու ԱՄԿ կոնվենցիաները՝ որպես հավասար աշխատանքային իրավունքների հիմք:

ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՔՎՈՏԱՆԵՐ

Այս հատվածում դասընթացավարը սկսում է քննարկումը քաղաքական մասնակցության իրավունքի սահմանումով՝ ընդգծելով, որ այն հանդիսանում է մարդու հիմնարար իրավունքներից մեկը և կարևոր նախապայման է հավասարության համար: Դասընթացավարը շարունակում է ներկայացնել, թե ինչպես է կանանց քաղաքական մասնակցության իրավունքը ամրագրված միջազգային փաստաթղթերում, մասնավորապես CEDAW 7-րդ հոդվածում:

Այնուհետև դասընթացավարը բացատրում է քվոտայի գաղափարը՝ որպես ժամանակավոր հատուկ միջոց՝ գենդերային անհավասարությունը նվազեցնելու և կանանց քաղաքական ներգրավվածությունը խթանելու համար: Քվոտաների անհրաժեշտությունը և դրանց արդյունավետության օրինակները քննարկում է համաշխարհային փորձի, ինչպես նաև Հայաստանի տվյալների հիման վրա: Վերջում ներկայացվում է Հայաստանի օրենսդրական դաշտում քվոտաների կարգավորումը՝ անդրադառնալով ինչպես Ազգային ժողովի, այնպես էլ Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրական համակարգերին:

Ընդմիջում (15 րոպե)

Երկրորդ մաս (Տևողությունը 1.5 ժամ)

Խաղ. «Փա՞ստ թե մի՞ֆ» (Տևողությունը 20ր)

Նպատակ

Խաղի նպատակն է վերացնել թյուր պատկերացումները գենդերային հավասարության մասին և անդրադառնալ կանանց արժանապատիվ աշխատանքին ու քաղաքական մասնակցությանը խոչընդոտող թեմաներին

Նկարագրություն

Դասընթացավարը Կարդում է կանանց իրավունքների վերաբերյալ պնդումներ, իսկ մասնակիցները քվեարկում են՝ դա փաստ է, թե միֆ:

Այնուհետև դասընթացավարը հայտնում է ճիշտ պատասխանը և քննարկում հիմքում ընկած խնդիրները:

Պնդումներ՝

1. «Ամբողջ աշխարհում կանայք և տղամարդիկ համարժեք աշխատանքը կատարելու համար ստանում են հավասար աշխատավարձը»
2. ՄԻՖ – Հայաստանում 2023 թ. աշխատավարձի գենդերային խզվածքը կազմել է 40.7%: Կանայք, միջին հաշվով, ամբողջ աշխարհում 20%-ով պակաս են վաստակում համարժեք աշխատանքի համար: (World Economic Forum)
3. «Աշխարհում ավելի շատ կանայք են աղքատության մեջ ապրում, քան տղամարդիկ»
4. ՓԱՍՏ – Կանայք ավելի հաճախ են ապրում աղքատության մեջ՝ սահմանափակ տնտեսական հնարավորությունների և աշխատավարձի տարբերության պատճառով: (UN Women)
5. «Կանայք աշխարհում զբաղեցնում են քաղաքական ղեկավար պաշտոնների ավելի քան 50%»
6. ՄԻՖ – 2024 թվականի տվյալներով, միայն 26%-ն է խորհրդարանականների կանայք: (IPU)
7. «Կանայք ավելի շատ ժամանակ են ծախսում չվճարվող խնամքի աշխատանքի վրա, քան տղամարդիկ»
8. ՓԱՍՏ – Կանայք իրականացնում են աշխարհի չվճարվող խնամքի աշխատանքի 76%-ը, ներառյալ երեխաների խնամքը և տնային գործերը: (Oxfam)
9. «Եթե կինն աշխատանքի վայրում ենթարկվել է սեռական ոտնձգության, հավանաբար, ինքն է դա թույլ տվել կամ իրեն դա դուր է գալիս»:
10. ՄԻՖ – Սեռական ոտնձգության պատասխանատվությունը միշտ ընկնում է ոտնձգություն կատարողի վրա: Ոչ մի իրավական կամ էթիկական հիմք չկա զոհին մեղադրելու կամ նրա վարքով արդարացնելու ոտնձգությունը: (CEDAW, ILO 190, ՄԱԿ հատուկ զեկուցողներ)

Այնուհետև դասընթացավարը քննարկում է խաղի արդյունքները: Խնդրում է մասնակիցներին կիսվել, թե ո՞ր փաստերն էին իրենց համար անսպասելի, ինչու՞

են որոշ սխալ պատկերացումներ շարունակում գոյություն ունենալ, ինչպե՞ս են այս խնդիրները ազդում կանանց առօրյա կյանքի վրա, ի՞նչ քայլեր կարող են ձեռնարկել գենդերային անհավասարությունը մարտահրավեր նետելու համար:

ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Դասընթացավարը պատմում է աշխատանքային իրավունքի,որպես մարդու սոցիալական իրավունքի մասին, անդրադառնալով ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին դաշնագրին ու Վերանայված եվրոպական սոցիալական խարտիային: Մասնակիցները քննարկում են ուղղակի և անուղղակի գենդերային խտրականությունը աշխատավայրում, խնդրելով բերել օրինակներ իրենց ծանոթ դեպքերից:

Այնուհետև դասընթացավարը ներկայացնում է աշխատավարձի գենդերային խզվածքի հիմնախնդիրը, բելերով կարճ վիճակագրություն, անդրադառնալով պատճառներին և այն լուծումներին, որոնք տրված են ԱՄԿ կոնվենցիաների և ԵՄ փորձի շրջանակներում: Քննարկում է ծավալվում աշխատավարձների թափանցիկության սկզբունքի շուրջ:

Դասընթացավարը ներկայացում է նաև աշխատանքային միջավայրում մայրության ու ընտանեկան պարտականությունների հետ կապված իրավունքները և խտրականության արգելքն աշխատանքային հարաբերություններում: Այս համատեքստում մասնակիցները ծանոթանում են ԱՄԿ 111-րդ 100-րդ, 183-րդ կոնվենցիաների և ՀՀ աշխատանքային օրենսգրքի դրույթներին:

Այնուհետև մասնակիցները քննարկում են աշխատավայրում բռնության ու ոտնձգության հիմնախդիրը: Դասընթացավարը ներկայացնում է ԿՌԿ հետազոտությունները թեմայի վերաբերյալ, ծանոթացնում է մասնակիցներին ԱՄԿ 190-րդ կոնվենցիայի և ՀՀ աշխատանքային օրենսգրքի դրույթներին, ինչպես նաև սեռական ոտնձգության ու դրա կանխարգելման առկա միջազգային փորձին:

Ամփոփում և ավարտ

Դասընթացի վերջում, դասընթացավարը պատմում է նաև Կանանց ռեսուրսային կենտրոնի կողմից պետական կառույցների հետ իրականացրած

աշխատանքները, որոնք ուղղված էին կանանց հիմնախնդիրների բարելավմանն ու իրավական կարգավորումների գենդերային զգայունության բարձրացմանը:

Դասընթացի համար անհրաժեշտ իրերի ցանկ՝

- համակարգիչ
- պրոեկտոր
- ֆլիպչարտ
- գունավոր մարկերներ

ՖԵՄԻՆԻԶՄ

Տևողությունը՝ 3 ժամ

Նպատակը՝

Դասընթացի նպատակն է մասնակիցներին ծանոթացնել ֆեմինիստական տեսության և ակտիվիզմի հետ: Ֆեմինիզմի դասընթացը իր մեջ ներառում է տեսական և գործնական մասեր: Տեսական մասը պետք է ներկայացնի ֆեմինիզմի ծագումը, դրա ալիքները և հայկական համատեքստում պատմությունը: Գործնական մասը պետք է մասնակիցներին ներկայացնի այն գործիքակազմը, որը նրանք կարող են օգտագործել ֆեմինիստական ակտիվիզմի և շահերի պաշտպանության համար: Դասընթացի ավարտին մասկակիցները կհասկանան ֆեմինիզմի ալիքները, տեղյակ լինեն հայ ֆեմինիզմի պատմությունից և կկարողանան տարբերակել ֆեմինիզմի տարբեր ուղղությունների մեջ ու օրինակներ բերել, թե յուրաքաչյուրի դեպքում ակտիվիզմը ինչպես է դրսևորվում:

Մեկնարկ (10 րոպե)

Դասընթացը սկսվում է «Ի՞նչ է ֆեմինիզմը» հարցով: Սա դասընթացավարին կօգնի հասկանալ մասնակիցների գիտելիքների պաշարը և տվյալ դասընթացից սպասելիքները: Ապա մասնակիցներին են ներկայացվում ֆեմինիզմի սահմանումը՝ ըստ բելլ հուքսի «Ֆեմինիզմը բոլորի համար է» գրքի:

Ֆեմինիզմը սեքսիզմին, սեքսիստական շահագործմանը և ճնշմանը վերջ տալու գաղափարախոսությունն է

Շատ կարևոր է, որպեսզի սահմանումը լինի համապարփակ և չսահմանափակվի լիբերալ ֆեմինիստաան տեսության՝ կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների օրակարգով: Ներկայացվում է, թե ինչ են սեքսիզմը և կնատյացությունը, սեքսիստական շահագործումը և ճնշումը:

Բաց քննարկում. Առասպելներ ֆեմինիզմի և ֆեմինիստների մասին (20 րոպե)

Դասընթացավարը հերթով կարդում է ստորև բերված առասպելները ֆեմինիզմի ու ֆեմինիստների մասին: Միասին քննարկումների միջոցով մասնակիցները պետք է այնուհետև խմբին բացատրեն, թե ինչու են սրանցից յուրաքանչյուրը առասպելներ: Ամեն առասպելից հետո դասընթացավարը էկրանին դնում է իրականությունը, որը էլի քննարկման առիթ է ստեղծում

Առասպել	Իրականություն
Ֆեմինիզմը տղամարդատյաց ուղղություն է. ֆեմինիստները սովորաբար ատում են տղամարդկանց:	Ֆեմինիզմը կանանց մասին է առաջին հերթին, տղամարդկանց ատելը ֆեմինիզմի նպատակը չէ
Ֆեմինիզմի նպատակը մայրիշխանություն հաստատելն է:	Ֆեմինզմը պայքարում է ազատության և հավասարության համար
Ֆեմինիստները չեն ամուսնանում, Ֆեմինիստները դեմ են ամուսնության և ընտանիքի ինստիտուտին:	Ֆեմինիստները քննադատաբար են վերաբերվում ամուսնության ինստիտուտին:

Ֆեմինիստները ատում են կանացիությունը	Ֆեմինիզմը քննադատաբար է մոտենում կանացիության այն մոդելին, որը հայրիշխանության կողմից է ստեղծվել:
Միայն կանայք կարող են լինել ֆեմինիստ:	Ֆեմինիզմը բոլորի համար է: Սեքսիզմի դեմ պայքարը կանանցով չի սահմանափակվում
Ֆեմինիստների մեծամասնությունը լեսբիներ են:	Ֆեմինիզմը բոլորի համար է՝ այն ինտերսեկցիոնալ է՝ այսինքն և լեսբի, և բի, և տրանս և ցիս կանանց համար
Ֆեմինիստական շարժման կարիք այլևս չկա Կանայք արդեն ունեն բոլոր անհրաժեշտ իրավունքները Ֆեմինիզմը սպառել է իրեն Ֆեմինիզմի ալիքների մասին քննարկումը կպատասխանի այս առասպելներին	

Առասելների քննարկումից անցվում է արվում ինտերսեկցիոնալիզմի գաղափարի քննարկմանը: Ներկայացվում է պատկեր, որը ցույց է տալիս սոցիալական կատեգորիաների փոխատողականությունը, բերվում են համապատասխան օրինակներ մեր իրականությունից:

Դրանից հետո հերթը ֆեմինիզմի ալիքները քննարկելուն է հասնում, որն իրականացվում է խմբային աշխատանքի միջոցով (տևողությունը՝ 40 րոպե): Մասնակիցները բաժանվում են 4 խմբի: Ամեն խմբին տրվում է մեկական պնդում՝ համապատասխան ֆեմինիզմի 3 ալիքներից որևէ մեկի. 1. «Կանայք պետք է ունենան ընտրելու և ընտրվելու իրավունք», 2. «Կանայք պետք է ունենան սեփական մարմինը տնօրինելու իրավունք», 3. «Կանայք պետք է ունենան բռնությունից ու ոտնձգությունից զերծ աշխատավայրում աշխատելու իրավունք», 4. «Սեռական կրթությունն ու դաստիարակությունը պետք է համընդհանուր լինի»: Խմբերին տրվում է 10 րոպե ժամանակ՝ քննարկելու ու գրելու առնվազն 3 պնդում, թե ինչու կանայք պիտի ունենան տվյալ իրավունքը: Այնուհետև խմբերը հերթով ներկայացնում են իրենց պնդումները, իսկ ամեն խմբի ներկայացնելուց հետո դասընթացավարը բացատրում է ֆեմինիզմի տվյալ ալիքը: Այսինքն, վերջնարդյունքում խաղի միջոցով մասնակիցները ծանոթանում են ֆեմինիզմի ալիքների հիմնական ասելիքներին ու բերած փոփոխություններին:

Ալիքների հակիրճ նկարագրությունը՝ ստորև.

- Առաջին ալիք (1848 - 1920). սկսվում է կանանց քվեարկելու (սուֆրաժ) իրավունքի համար պայքարով: Բրիտանիայում սուֆրաժետները (կամ սուֆրաժիստները ֆր.՝ suffragettes, ֆր.՝ suffrage՝ ընտրական իրավունք) պայքարում էին կանանց ընտրելու և սեփականություն ունենալու իրավունքի համար, և 1918 թվականին 30 տարեկանը լրացած կանայք ստացան սեփականություն ունենալու իրավունք: ԱՄՆ-ում ֆեմինիզմի առաջին ալիքն ավարտվել է 1919 թվականին Սահմանադրության տասնիններորդ լրացմամբ՝ բոլոր նահանգներում կանանց ընտրության իրավունքի ամրագրմամբ: Կարևոր է քննարկել այն լարվածությունները, որ կային լիբերալ և ռադիկալ՝ սոցիալիստ և անարխիստ, ֆեմինիստների միջև օրակարգերի և առաջնահերթությունների մասով:
- Երկրորդ ալիք (1963-1980-ականներ). «Անձնականը քաղաքական է» կարգախոսի սկիզբը: Բեթի Ֆրիդանի «Կանացի միստիկա» գիրքը 1963թ.

սկիզբ է դնում երկրորդ ալիքին: Կանայք սկսում են խոսել սեռականության և վերարտադրողական իրավունքների մասին՝ հակաբեղմավորիչներին հասանելիություն, աբորտի օրինականացում, ապօրինի ստերջացումներին վերջ և նշանավորում է կրծկալների մասսայական այրումներով: Սիմոնա դը Բովուրաի «Ուրիշ սեռ» գիրքը համարվում է այս ալիքի ներկայացուցչական գիրքը: Գրքում նա պնդում է, որ կանացիությունը սոցիալական կոնստրուկտ է, և որ այն ապրած փորձառությունների հանրագումարն է՝ «Կին չեն ծնվում, կին դառնում են»:

- Երրորդ ալիք (1991-?). Սկսվում է Անիթա Հիլի ԱՄՆ Կոնգրեսի առաջ տված վկայությամբ: Ներառում է աշխատավայրում սեռական ոտնձգությունների դեմ պայքար և պաշտոնական դիրքերում կանանց թիվը մեծացնելու ջատագովություն: Բել հուքսը այս շրջանի ամենազդեցիկ ֆեմինիստներից է: Այս ալիքի մեջ են մտնում նաև Յուդիթ Բաթլերը, Գլորիա Անզալդուան, Շելա Սանդովալը, Շորի Մորագան, Օդրի Լորդը, Մաքսին Հոնգ Քինգսթոնը: Գունամաշկ ֆեմինիստները հատկապես սևամորթ ֆեմինիստները, փորձում էին ֆեմինիստական շրջանակներում բարձրաձայնել ռասայական խնդիրների վերաբերյալ: Առաջ եկավ ինտերսեկցիոնալության գաղափարը, որ պնդում էր որ կանանց տարբեր խմբեր հայրիշխանության կողմից ենթարկվում են տարբեր աստիճանի ճնշումների՝ ելնելով իրենց դասինց,ռասայից, էթնիկ և ազգային պատկանելիությունից, գենդերային ինքնությունից և սեռական կողմնորոշումից, հաշմանդամության կարգավիճակից, կրոնից և այլ սոցիալական բաղադրիչներից:
- Չորրո՞րդ ալիք - հարկավոր է լսարանին տալ հարց՝ արդյոք կարծում են, որ ներկայումս 4-րդ ալիքում ենք գտնվում, թե՞ ոչ: Ու դրանից հետո ներկայացնել, թե դեռևս ինչ խնդիրներ կան, որոնց անդրադառնում են ֆեմինիստները:

Ընդմիջում՝ 15 րոպե

Այնուհետև պետք է անցում կատարվի հայ ֆեմինիզմին ու դրա ներկայացուցիչներին՝ Սրբուհի Տյուսաբ, Զապել Եսայան, Հայկանուշ Մարկ և Շուշանիկ Կուրղինյան (Տևողությունը՝ 30 րոպե):

Սկսվում է Սրբուհի Տյուսաբի «Մայտա» վեպի մասին պատմելով, քննարկվում է Տյուսաբի նկատմամբ ժամանակի համայնքային ուժերի քննադատությունները:

Այնուհետև ներկայացվում է Զապել Եսայանը՝ նրա կյանքը և աշխատանքը որպես գրող, քննադատ և մտավորական: Ըստ լսարանի, կարելի է նաև քննարկել Եսայանի գործերը խաղաղության թեմայով՝ մասնավորապես «Բավական է[1]» (1912) էսսեն: Հաջորդիվ ներկայացվում է Հայկանուշ Մարկը և նրա խմբագրությամբ տպագրվող «Հայ կին» ամսաթերթը: Սա լավ հնարավորություն է Ցեղասպանությունից հետո Կ. Պոլսի հայկական համայնքի մասին խոսելու և ֆեմինիզմի մասին ժամանակի պատկերացումները քննարկելու համար: Այնուհետև ներկայացվում են կարևոր թվեր ու իրադարձություններ Խորհրդային Հայաստանի ու Հայաստանի երրորդ հանրապետության շրջաններից:

Այնուհետև պետք է քննարկել ժամանակակից հայկական իրականության մեջ ֆեմինիստական հիմախնդիրները՝ գենդերային բռնություն և խտրականություն, աշխատանքային իրավունքներ, ՍՎԻ-ներ և հակագենդերային շարժումներ: Սրանից հետո պետք է ներկայացնել գործնական օրինակներ, թե ինչ կարող ենք անել մենք այսօր ու ինչ ձևերով ու մեթոդներով: Պետք է օրինակներ բերել ԿՌԿ ադվոկացիայի ձեռքբերումներից: Սա մասնակիցներին հնարավորություն կտա հասկանալ, թե իրենց ակտիվիստական գործունեությունը հետագայում ինչպես են պատկերացնում:

Ֆեմինիստական ջատագովությունը կարող է լինել ֆեմինիստների կողմից ստեղծված տարածքում կամ տարածքներում, որտեղ ֆեմինիստներին հրավիրում են: Ստեղծված տարածքներում ակտիվիզմով զբաղվելը շատ ավելի հեշտ է, իսկ հրավիրված տարածքներում ջատագովության հնարավորությունները քիչ են: Այդ իսկ պատճառով ֆեմինիստ-ակտիվիստները իրենց պիտի հարցնեն.

1. Որտե՞ղ մենք ունենք ամենաշատ ռեսուրսները քաղաքական գործընթացների վրա ազդելու համար:
2. Յուրաքանչյուր տարածքում լինելու հետ կապված ի՞նչ ռիսկեր կան: Ջատագովության և շահերի պաշտպանության տեսանկյունից շատ կարևոր է նորից շեշտել հակագենդերային շարժումների և ֆեմինիստ-ակտիվիստների նկատմամբ հետապնդումներիի դերը:
3. Ինչպես կարող ենք երաշխավորել, որ մեր օրակարգերը լսելի լինեն տեղական, հանրապետական և միջազգային մակարդակներում:
4. Ո՞ր ինստիտուտներում են համապատասխան քաղաքական որոշումները

[1] Տե՛ս https://bit.ly/3sczWos

կայացվում:

5. Որտե՞ղ մենք կարող ենք ունենալ ամենամեծ ազդեցությունը՝ տեղական, հանրապետական և միջազգային տեսանկյուններից:

Ջատագովության և շահերի պաշտպանության տեսակներ.

- Ջատագովություն օրենսդրական փոփոխություններ, ռեֆորմներ իրականացնելու, պետական և ոչպետական կառույցներում քվոտաների համար
- Խորհրդարաններում կանանց քվոտա
- Աշխատանք միջազգային կառույցների ինչպիսիք են ՄԱԿ-ը, ԵՄ-ն, ԱՄՆ ՄԶԳ և այլն: Հետազոտություններ և զեկույցներ այս կառույցների համար: Օրինակ՝ Համընդհանուր պարբերական դիտարկումը (Universal Periodic Review, UPR), որը ներկայացվում է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդին:
- Աշխատանք բիզնեսների հետ իրենց կորպորատիվ քաղաքականությունը գենդերազգայուն դարձնելու համար՝ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակներում

Ավելի ճախական՝

- Համայնքում ակտիվիստական խմբերի և ցանցերի ձևավորում և դրանց աջակցում,
- Ցույցեր և փողոցային պայքար, գործադուլներ, դասադուլներ, արհմիությունների կազմակերպում և աջակցում,
- Արտ-ակտիվիզմ, էկո-ակտիվիզմ,
- Ֆեմինիստական իմացաբանությամբ մեթոդաբանության ստեղծում, զարգացում և տարածում, ֆեմինիստական բանավոր պատմություններ և պատմաբանություն
- Սոցիալական մեդիայում իրազեկման քարոզարշավներ (Facebook, Instagram, YouTube, TikTok, և այլն), պոդքաստեր, հոդվածներ, այլ լեզուներից ֆեմինիստական տեքստերի թարգմանություններ:

Որպես օրինակ կարելի է նշել ԿՌԿ կողմից իրանացված ծրագրերն ու

նախաձեռնությունները՝ Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն, Կանանց քայլարշավ, Աղջիկները խոսում են, ֆեմինիստական ապահով տարածք, կոլեկտիվ խնամք և փոխաջակցման խմբեր և այլն:

Եթե ժամանակ կմնա՝ խմբային աշխատանք (15 րոպե)

Մասնակիցները բաժանվում են խմբերի և քննարկում ծավալում հետևյալ թեմայով «Ի՞նչ կարող են կանայք անել հիմա, որ չէին կարող անել 100 տարի առաջ»: Քննարկումը պետք է տևի 5 րոպե, որից հետո յուրաքանչյուր խումբ 10 րոպե ներկայացնում է իրա առանձնացրած ցանկը: Իսկ դասընթացավարը պետք է քաջալերի բոլորի մասնակցությունը՝ նրանց տարբեր ոլորտների ու հիմնախնդիրների մասին հիշեցնելով: Այդ վարժության համար մասնակիցներին անհրաժեշտ է թուղթ և գրիչ:

Հնարավոր պատասխաններ են.

Կրթության իրավունք և գիտությամբ զբաղվելու իրավունք, մասնավոր սեփականության իրավունք, վարորդական իրավունք, ամուսնուն ընտրելու իրավունք, աբորտի և ընտանիքի պլանավորման իրավունք, հակաբեղմնավորիչներից օգտվելու իրավունք, աշխատանքային իրավունքներ՝ օր. հղիության ընթացքում ապօրինաբար աշխատանքից չազատվելու իրավունք, զբաղվել ակտիվ քաղաքական կյանքով, որպես ակտիվիստներ կամ քաղաքական գործիչներ, զբաղվել պրոֆեսիոնալ սպորտով

Ամփոփում և ավարտ (10 րոպե)

Դասընթացը պետք ավարտվի «Ինչու՞ է մեզ ֆեմինիզմը պետք այսօր» հարցով՝ քննարկումը կտևի 5-7 րոպե և դասընթացավարի կողմից կրկին պետք է բարձրացվեն տարատեսակ հարցեր, որոնք մասակիցներին կքաջալերեն մտորել և ակտիվ մասնակցություն ցուցաբերել:

ԳԵՆԴԵՐ

Նպատակ՝

Դասընթացի նպատակն է մասնակիցներին ծանոթացնել գենդեր եզրույթի, դրա սոցիալ-մշակութային դրսևորումների, գենդերային կարծրատիպերի, խտրականության ու հավասարության և գենդերային հիմնահարցերին ակտիվիզմի միջոցով անդրադառնալու մեխանիզմների հետ: Դասընթացի

արդյունքում մասնակիցները պետք է ամբողջական պատկերացում ունենան գենդեր, գենդերային ինքնություն, գենդերային դեր եզրույթների, գենդերային կարծրատիպերի ու խտրականության դրսևորումների և այստեղ մշակութային նորմերի ու սովորույթների ազդեցությունների մասին: Դրանից բացի, մասնակիցները նաև ծանոթ կլինեն գենդերային հիմնախնդիրների բարձրաձայնման և գենդերային հավասարությանը նպաստելու ակտիվիստական մեխանիզմների հետ:

Առաջին մաս (Տևողությունը 1.5 ժամ)

Մեկնարկ՝

Դասընթացի սկզբում դասընթացավարը հարցնում է մասնակիցներին թե ի՞նչ գիտեն նրանք գենդերի մասին, ի՞նչ է այն նշանակում: Սա կօգնի դասընթացավարին հասկանալու թեմայի մասին խմբի տեղեկացվածության մակարդը: Մասնակիցների պատասխանները լսելուց հետո, դասընթացավարը տալիս է գենդերի սահմանումը և քննարկում այն մասնակիցների հետ:

Գենդերը մարդու սոցիալական սեռն է: Բոլոր հատկանիշները, դերերը, վարքագիծը, որ տվյալ մշակույթում ակնկալվում է մարդուց ըստ իր սեռի:

Գենդերը սահմանելուց հետո, մասնակիցներին ներկայացվում է սեռի և գենդերի տարբերությունները՝ սահամանելով սեռը որպես կենսաբանական, իսկ գենդերը՝ սոցիալական հատկանիշ: Անդրադարձ է կատարվում սեռի ճանաչման և գենդերի ձևավորման փուլերին, վերջինիս մեջ հատուկ նշելով դրա հասարակության կողմից մոդելավորված լինելը:

Քննարկում՝ Գենդերային դերը ներկայացնելու համար մասնակիցներին ցույց է տրվում նորածին երեխաների լուսանկար, որտեղ երեխաներից մեկը կրում է կապույտ, մյուսը՝ վարդագույն գլխարկ, այնուհետև դասընթացավարը խնդրում է ասել թե նկարում ո՞ր երեխան է աղջիկ, որը՝ տղա և ինչո՞ւ: Ստացված պատասխանների արդյունքում դասընթացավարը ծավալում է քննարկում՝ առաջ տանելով այն գաղափարը, որ գենդերային դերերը տրվում են հասարակության կողմից և չեն ծնվում մարդու հետ:

Այնուհետև դասընթացավարը սահմանում է գենդերային դերը, հետո նաև՝ գենդերային արտահայտումը: Վերջիններս սահմանելուց հետո խոսում է դրանց տարբերությունների մասին՝ նշելով, որ գենդերային դերը մշակութային է և տրված է հասարակության կողմից, իսկ գենդերային արտահայտման հիմքը

մարդու անհատական ընկալումներն են:

Սրանից հետո քննարկվում է գենդերային դերերի ձևավորման մեխանիզմները, անդրադառնալով խաղերի, հագուստի, արտաքային հատկանիշների, լեզվամտածողության և մեզ շրջապատող գրեթե ամեն ինչի «կանացի» և «տղամարդկային» բաժանումներին:

Ընդմիջում (15 րոպե)

Երկրորդ մաս (Տևողությունը 1.5 ժամ)

Գենդերը, գենդերային դերն ու գենդերային արտահայտումը քննարկելուց հետո դասընթացավարը տալիս է գենդերային ինքնության սահմանումը և քննարկում այն:

Գենդերային ինքնությունը մարդու կողմից սեփական գենդերի ընկալումն է, այն, թե մարդն իրեն որպես ով է զգում:

Գենդերային ինքնությունը սահմանելուց հետո, դասընթացավարը ներկայացնում է որոշ հիմնական գենդերային ինքնություններ ու մեկնաբանում դրանք.

Բիգենդեր - Բիգենդերը գենդերային այն ինքնությունն է, երբ մարդն իրեն նույնականացնում է երկու գենդերի հետ. և՛ կնոջ, և՛ տղամարդու: Բիգենդեր մարդիկ ունենում են իրենց ընկալմամաբ կանացիին և տղամարդկայինին բնորոշ հատկանիշներն ու վարվելակերպը: Եթե բիգենդեր մարդը զգում է/նկատում է, որ իր գենդերային ինքնությունը ժամանակից կամ իրադարձություններից կախված փոփոխվում է, ապա նա կարող է նույնականանալ նաև որպես գենդեր ֆլուիդ , որը բնորոշում է այն անհատին ում գենդերային ինքնությունը փոփոխվում/տատանվում է ժամանակի ընթացքում:

Ագենդեր - Ագենդերը գենդերային այն ինքնությունն է, երբ մարդն իրեն չի նույնականացնում որևէ գենդերի հետ: Քանի որ ագենդերը գենդերը ենթադրում է չնույնականանալ որևէ գենդերի հետ, կարելի է հանդիպել տեսակետներ, որոնք պնդում են, որ այն չպետք է ներկայացվի/ընկալվի իբերև գենդեր: Հակառակ սրան կա այն տեսակը, որ կարևոր է ագենդերը ներկայացնել իբրև գենդեր, որովհետև սա ձև է ցույց տալու/նշելու, որ մարդը չի նույնականանում որևէ գենդերի հետ:

Տրանսգենդեր - Տրանսգենդերը գենդերային այն ինքնությունն է, երբ մարդն իրեն նույնականացնում է ծննդյան ժամանակ ունեցած սեռից տարբերվող

գենդերի հետ: Օրինակ, եթե մարդը մարդը ծնվել է իգական սեռական օրգաններով և իրեն նույնականացնում է/ զգում է իրեն տղամարդ ապա նա արող է նույնականանալ որպես տրանս տղամարդ: Տրանս անձիք և՛ կարող են վիրահատական միջամտություն իրականացնել սեռափոխության համար և՛ կարող են չիրականացնել այն:

Դրանից հետո անդրադարձ է կատարվում գենդերային կարծրատիպերից խոսելուն: Նախ, դասընթացավարը սահմանում է գենդերային կարծրատիպեր հասկացությունը:

Գենդերային կարծրատիպերն ընդհանրացված կամ կանխակալ գաղափարներ են, որոնց համաձայն մարդիկ դասակարգվում են գենդերային կոնկրետ խմբերի:

Խաղ.

Գենդերային կարծարտիպերը սահմանելուց հետո դասընթացավարը խնդրում է յուրաքանչյուր մասնակիցի թղթի վրա գրել գենդերային մեկ կարծրատիպ և այն դնել տուփի մեջ: Դրանից հետո մասնակիցները վերցնում են մեկական թուղթ և հերթով փորձում խաղալ թղթի վրա գրված կարծրատիպը, իսկ մնացած մասնակիցները գուշակում են, թե որ գենդերին բնորոշ կարծրատիպ է գրված թղթի վրա: Խաղի ավարտին դասընթացավարը մասնակիցների հետ քննարկում է գենդերային կարծրատիպերի խնդրային կողմերը:

Սրանից հետո, դասընթացավարը քննարկում է բացում գենդերային խտրականության մասին: Նախ, նա հարցնում է մասնակիցներին, թե ինչպես են իրենք պատկերացնում գենդերային խտրականությունը, այնուհետև տալիս դրա սահմանումը և քննարկում այն:

Գենդերային խտրականությունը մարդու գենդերի հիմքով նրա իրավունքներն ու շահերը սահմանափակող ցանկացած տարբերակումը, բացառումը կամ նախապատվությունն է, որը խանգարում է մարդուն ամբողջությամբ օգտվել իր իրավունքներից:

Այնուհետև անցում է կատարվում գենդերային խտրական մշակութային ավանդույթներին, նորմերին ու սովորույթներին:

Խմբային աշխատանք.

Մասնակիցները բաժանվում են խմբերի և յուրաքանչյուր խմբի առաջադրանք է տրվում գրելու մշակութային այն ավանդույթները, սովորույթներն ու

նորմերը, որոնք ըստ իրենց գենդերային խտրական են: Դրանից հետո խմբերը ներկայացնում են իրենց կողմից ընտրված ավանդույթներն ու նորմերը և մեկնաբանում, թե ինչու ենք դրանք գենդերային խտրական:

Խմային աշխատանքից հետո դասընթացավարը ներկայացնում է նաև իր կողմից նախապես առանձնացված ավանդույթները, սովորույթներն ու նորմերը և վերլուծում դրանք գենդերային տեսանկյունից: Ինչպես նաև անդրադառնում է լեզվամտածողությանը՝ իբրև գենդերային կարծրատիպերի ձևավորման ու արտահայման միջոց:

Գենդերային խտրական մշակութային նորմեր, ավանդույթներ ու սովորույթներ՝

Կարմիր խնձոր

Օժիտ

Կանանց թլպատում, օրգանների խեղում

Անցումային ծեսեր

Ավարտ և ամփոփում.

Դասընթացի վերջում դասընթացավարը տալիս է գենդերային հավասարության սահմանումը և քննարկում դրա հիմնական կոմպոնենտները:

Գենդերային հավասարությունը իրենից ներկայացնում է դիրք, երբ բոլոր մարդիկ ունեն հավասար իրավունքներ, հնարավորություններ և խրախուսումներ անկախ իրենց գենդերից:

Սահմանումը ներկայացնելուց հետո դասընթացավարը խոսում է նաև գենդերային հավասարությանն ուղղված ակտիվիստական մի քանի օրինակներից, անդրադառնալով հանրային ակցիաներ կազամերպելու, արթ-ակտիվիզմով խնդրին անդրադառնալու, քննարկումներ կազմակերպելու փորձառություններին:

Դասընթացի համար անհրաժեշտ իրերի ցանկ՝

- համակարգիչ
- պրոեկտոր
- ֆլիպչարտ

- գունավոր մարկերներ
- փոքր կպչուն թղթեր

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ

Նպատակ՝

Դասընթացի նպատակը գենդերային բռնության, դրսևորման առանձնահատկությունների և կանխարգելման մեխանիզմների մասին մասնակիցներին իրազեկելն է: Դասընթացի արդյունքում մասնակիցները ամբողջական պատկերացում կկազմեն գենդերային բռնության, դրա հիմքերի, տեսակների և դրա տարբեր դրսևորումների, ֆիզիկական և հոգեբանական հետևանքների ու կանխարգելման հիմնական մակարդակների մասին:

Առաջին մաս (Տևողությունը 1.5 ժամ)

Մեկնարկ՝

Դասընթացը սկսվում է գենդերային հավասարության մասին անդրադարձով: Այս մասին խոսելիս հիմնականում շեշտադրվում են հայրիշխանական մշակույթում գենդերային դերերն հիմնականում քննարկելով ուժի ու իշխանության տղամարդկանց ձեռքում կենտրոնացված լինելու և հնազանդության ու առաքինության դերը կնոջը տալու փաստը: Սրանից հետո դասընթացավարը սահմանում է գենդերային հավասարությունն ու գենդերային խտրականությունը և քննարկում այն մասնակիցների հետ:

Գենդերային խտրականություն. Սեռի/գենդերային ինքնության հատկանիշով անձանց իրավունքներն ու շահերը սահմանափակող ցանկացած տարբերակում:

Գենդերային հավասարություն. Հավասար իրավական կարգավիճակ և դրա իրականացման համար հավասար հնարավորություններ, որոնք հնարավորություն են ընձեռում անձանց, անկախ սեռից, ազատորեն օգտագործելու իրենց ունակությունները անձանական և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում:

Խոսելով գենդերային հավասարության ու խտրականության մասին, դասընթացավարը հիմնականում շեշտադրում այն, որ դրանք ենք կազմում

գենդերային բռնության հիմքը: Դասընթացավարը անդրադառնում է նաև այն հարցին, թե ինչո՞ւն են հենց կանայք ենթարկվում գենդերային բռնության: Հարցին պատասխանելով դասընթացավարը հիմնականում շեշտադրում է գենդերային անհավասարության, ուժի և իշխանության անհավասար բաշխման, հասարակության մեջ կնոջ հնազադվողի դերում լինելու գաղափարները իբրև վերոնշյալի հիմք՝ գենդերային սոցիալականացումը. դիտում ենք միասին տեսահոլովակ գենդերային սոցիալականացման մասին:

Պնդումների վարժություն. (Տևողությունը 20ր)

Գենդերային բռնությանն առնչվող կարծրատիպերը մշակութային ու առօրեական մակարդակում քննարկելու և դրանք մասնակիցների համար ավելի պատկերավոր ու հասկանալի դարձնելու համար դասընթացավարը նրանց է ներկայացնում 6 պնդում և խնդրում, որ ասեն արդյոք համաձայն են դրանցից յուրաքանչյուրի հետ և քննարկում պատասխանները:

Պնդումներ.

1. Մարդու ծեծածը, վարդի ծեծած ա
2. Կինը բուրդ ա, ինչքան ծեծես կփափկի
3. Ով չի ծեծել իր կնկանը, վայ կտա իր ծնկանը
4. Բռնության ենթարկվող կանայք ցանկացած պահի կարող են հեռանալ բռնարարից
5. Կինն է մեղավոր, որ իր ամուսինն իրեն ծեծում է
6. Անհնար է սեռական բռնություն գործադրել կնոջ նկատմամբ, եթե նա համաձայն չէ դրան

Սրանից հետո, դասընթացավարը սահմանում է բռնությունը, նշում դրա գենդերային առանձահատությունները շեշտադրելով, բռնության ենթարկված անձանց մեծ մասը կանայք են:

Բռնություն. Նպատակաուղղված ֆիզիկական ուժ/իշխանություն կամ դրա սպառնալիք ինքդ քո, այլ անձի, խմբի, համայնքի նկատմամբ:

Բռնության սահմանումը տալուց հետո դասընթացավարը քննարկում է գենդերային բռնությունը ու այն դիտարկում հասարակական, մշակութային

արժեքների, գենդերային կարծրատիպերի ու հավասարության մակարդակներում: Այնուհետև ներկայացվում է բռնության տեսակները և քննարկում դրանք մասնակիցների հետ:

Բռնության տեսակներ՝

- Հոգեբանական - վիրավորական արտահայտություններ, ազատության սահմանափակում
- Ֆիզիկական - կծել, հարվածել, ծեծել
- Սեռական - բռնաբարություն, այդ թվում՝ ամուսնական բռնաբարություն, ֆրոտաժ (ֆիզ.կոնտակտ հանրային վայրերում), վուաերիզմ (գաղտնի հետևում)
- Տնտեսական - եկամուտի տնօրինում, ֆինանսական կախվածություն
- Վնասակար ավանդույթներ և սովորույթներ
- Անտեսում - միայն երեխաների, տարեցների ու հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ

Այս քննարկումից հետո, դասընթացավարը սկսում է խոսել ընտանեկան ու սեռական բռնության մասին, անդրադառնալով դրանց առանձնահատկություններով ու վիճակագրությանը:

Ընտանեկան բռնություն. Ընտանեկան բռնությունը մարդու իրավունքների ոտնահարման տարածված հիմնախնդիրներից մեկն է, որի հիմնական նպատակն ուժ և վերահսկողություն հաստատելն է դիմացինի նկատմամբ: Բռնությունը կարող է իրականանալ ինչպես ֆիզիկական ուժի կիրառմամբ, այնպես էլ ՝ առանց:

Ընտանեկան բռնությունը սահմանելուց հետո դասընթացավար ներկայացնում է բռնության տեսակներն (ֆիզիկական, սեռական, հոգեբանական, տնտեսական) ու արտահայտման ձևերը նշելով օրինակ հարկադիր, վաղ ամուսնությունների, հղիության ընդհատման հարկադրման, հետապնդման և այլն մասին: Ընտանեկան բռնությանը տեսակները քննարկելուց հետո դասընթացավարը նաև անդրադառնում է դրա ցիկլիկ բնույթ ունենալու փաստին: Այստեղ հիմնականում քննարկվում են բռնության երեք հիմնական փուլերը՝ «լարվածություն –

բռնություն – մեղրամիս»:

Դասընթացավրն այնուհետև անդրադառնում է ընտանեկան բռնության պատճառներին, նշելով, որ ընտանեկան բռնության պատճառներ չեն՝

- ալկոհոլը
- գենետիկան
- այս կամ այն մտավոր, հոգեկան խնդիրները
- զայրույթը, չվերահսկվող ագրեսիան
- բռնության ենթարկվող անձի վարքը

Մինչ հետևանքների քննարկումը դասընթացավարը առաջարկում է մասնակիցներին միասին իրականացնել վարժություն, որը կոչվում է Մի կնոջ պատմություն, որի հիմնական նպատակը բռնության ազդեցությունը կամ հետևանքները հասկանալուն է ուղղված: Մասնակիցները բաժանվում են երեք խմբերի և գրում մի կնոջ պատմություն կյանքի տարբեր փուլերի մասին՝ մինչ բռնությունը, բռնության ընթացքում և բռնությունը հաղթահարելով:

Սրանից հետո դասընթացավարը խոսում է նաև ընտանեկան բռնության հետևանքներից (ֆիզիկական, հոգեբանական) և առանձնահատկություններից: Ընտանեկան բռնության առանձնահատկություններն են՝

- Կատարվում է մտերիմ մարդու, ազգականի, զուգընկերոջ, նախկին զուգընկերոջ կողմից
- Միտում ունի բարդանալու, ուժգնանալու
- Ցիկլային բնույթ է կրում
- Կարող է ազդեցություն ունենալ նաև ընտանիքի այլ անդամների վրա՝երեխաներ, ծերեր

Այնուհետև դասընթացավարը սկսում է քննարկել սեռական բռնությունն ու դրա առանձնահատկությունները

Սեռական բռնություն. Սեռական բռնությունը սահմանվում է որպես ցանկացած սեռական ակտ կամ դրա փորձ, անցանկալի սեռական մեկնաբանություն կամ առաջարկություն, որն ուղղված է անձի սեռականությանը, որոշ դեպքերում,զուգահեռաբար օգտագործելով

հարկադրանք կամ սպառնալիք: Սեռական բռնության սահմանման մասերից է նաև համաձայնության եզրույթի կարևորումը և ընդգծումը:

Սեռական բռնությունը սահմանելուց հետո դասընթացավարն անդրադառնում է դրա առանձնահատկությունների և քննարկում այն հետևյալ տեսանկյուններից՝

- Անհավասար ուժ ու իշխանություն
- Սեռականության և կնոջ սեռական անձեռնմխելիության նկատմամբ «հաղթանակ»
- Ամոթ ու խարան, նաև բացահայտվածության ցածր տոկոս
- Կանանց արդարադատության վերականգման իրավունքի ոտնահարում

Հոլովակի դիտում. (Տևողությունը 2:30ր)

Մասնակիցներին ցուցադրվում է «համաձայնությունը և տոլման» հոլովակը:

Դրանից հետո, դասընթացավարը շեշտադրում է համաձայնության կարևորությունը՝ քննարկելով այն սեռական բռնության կոնտեքստում:

Ընդմիջում (Տևողությունը 15ր)

Երկրորդ մաս (Տևողությունը 1.5 ժամ)

Շարունակելով սեռական բռնության մասին քննարկումը, դասընթացավարը ներկայացնում և մեկնաբանում է դրա տեսակները՝ քննարկելով դրանք մասնակիցների հետ:

Սեռական բռնության տեսակները՝

- բռնաբարություն, այդ թվում՝ ամուսնական բռնաբարություն
- բռնաբարության փորձ
- սեռական ոտնձգություններ
- ինցեստ
- սեքսուալ շահագործում
- վաղ ամուսնություն
- առցանց սեռական բռնություն

Այնուհետև, մասնակիցների մոտ գենդերային բռնության ու դրա տարածվածության մասին ավելի հստակ պատկերացում ձևավորելու համար, դասընթացավարը ներկայացնում ու քննարկում է 10 փաստ գենդերային բռնության մասին:

Փաստեր՝

Գենդերային բռնությունը տարածված հանցագործության ձև է ամուսնությունների 25-50% ընտանեկան բռնություն չի տարբերակում կրթական, սոցիալ-տնտեսական կարգավիճակ

7. Գենդերային բռնության զոհերի 90% կանայք են
8. Այն ոչ կոնֆլիկտ է և ոչ էլ զայրույթի արտահայտում, այն նախ և առաջ ուժի և վերահսկողության հաստատման գաղափարն է
9. Ընտանեկան բռնության դեպքերի 70% տուժում են երեխաները
10. Ոչ բոլոր զոհերն են թույլ և անօգնական
11. Զոհերը մեղավոր չեն բռնության համար
12. Հաշմանդամություն ունեցող անձիք առավել ռիսկային են
13. Առկա են բազմաթիվ և համալիր գործոններ, որոնց պատճառով կանայք չեն լքում բռնարարներին, կամ չեն դիմում իրավապահ մարմիններ
14. Բռնարարները ալկոհոլից կախվածություն ունեցող անձինք չեն, նրանք կարող են հեշտությամբ կառավարել զայրույթը, հմայիչ են և մանիպուլյատիվ
15. Քանի դեռ կա գենդերային անհավասարություն, կլինի նաև գենդերային բռնությունը

Դրանից հետո դասընթացավարը քննարկում է մարդու կյանքի տարբեր փուլերում (մանկություն, պատանեկություն, վերարտադրողական տարիք, ծերություն) գենդերային բռնության դրսևորման ձևերը և շեշտադրում է կատարվում հատկապես հոգեբանական տրավմայի վրա, մասնավորապես, ինչպես է տրավման նպաստում սոսնձային տրավմատիկ կապվածությանը ընտանեկան բռնության պարագայում և ինչպես է հոգետրավման կապված փախչիր-հարձակվիր-քարացիր հոգեֆիզիոլոգիական ռեակցիայի հետ և ինչպես է ազդում բռնության ենթարկված անձի վարքի վրա. ինչու է դա կարևոր իմանալ

մասնակիցների համար:

Ամփոփում և ավարտ

Դասընթացի վերջին հատվածում քննարկվում է գենդերային բռնության հիմնական մակարդակներն ու մեխանիզմները, այս կերպ փորձելով մասնակիցների համար առավել պատկերավոր դարձնել խնդրին արձագանքելու ու դրա լուծմանը նպաստող հնարավոր տարբերակները: Այստեղ դասընթացավարը գենդերային բռնության կանխարգելումը քննարկում է անձնական, համայնքային և հասարակական, ինստիտուցիոնալ մակարդակներում:

Կանխարգելման հիմնական մակարդակներ՝

- Առանձին, անհատական վարքի փոփոխություն
- Ինստիտուցիոնալ բարեփոխումներ
- Տեղական համայնքների ներգրավում
- Օրենքներ ու ռազմավարություններ:

Այստեղ նշվում է նաև հասարակության շրջանում գենդերային բռնության մասին իրազեկվածության բարձր մակարդակի, ոստիկանական ու այլ ծառայությունների գործունեության կարևորության մասին:

Դասընթացավարը ներկայացնում է նաև գենդերային բռնության կանխարգելմանն ուղղված կանանց ռեսուրսային կենտրոնի կողմից իրականացրած աշխատանքները:

Դասընթացի համար անհրաժեշտ իրերի ցանկ՝

- համակարգիչ
- պրոեկտոր
- ֆլիպչարտ
- գունավոր մարկերներ
- փոքր կպչուն թղթեր

ՍԵՌԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Դասընթացի նպատակն է մասնակիցներին ծանոթացնել ՍՎԱԻ հիմախնդիրներին և նրանց իրազեկել այս առումով սոցիալ-մշակութային և օրենսդրական կարգավորումներին ու սահմանափակումներին, ներկայացնել բոլոր այն բնագավառները, որտեղ շահերի պաշտպանությունը առավելապես կարևոր է վերարտադրողական արդարության տեսանկյունից: Դասընթացի վերջում մասնակիցները կ ունենան համապարփակ պատկերացում ՍՎԱԻ հիմնախնդիրների վերաբերյալ և ծանոթ կլինեն այն գործիքակազմին, որ ֆեմինիստ-ակտիվիստները կիրառում են հանրության և պետության հետ աշխատանքներում: Դասընթացի ավարտին մասնակիցներին պետք է տրվի ԿՌԿ-ի կողմից իրականացված հետազոտությունների և քաղաքական փաստաթղթերի գրականության ցանկ, որպեսզի նրանց քաջալերվի ավելի խորքային ծանոթանալ հիմնախնդիրներին:

Ներածություն

Այստեղ դասընթացավարը ներկայացնում է օրվա թեման և խոսում է, թե ինչու է կարևոր անդրադառնալ սեռական և վերարտադրողական առողջության և իրավունքների հիմնախնդիրներին կանանց իրավունքների տեսանկյունից: Ներկայացնում է օրակարգային հիմնահարցերը և խոսում է ապահով տարածքի կարևորության մասին: Մի փոքր խոսում է, որ մասնակիցները կարող են անհարմարության զգացողություն ունենալ, քանի որ շատերը վարժված չեն խոսելու սեռականությունից և սեռականությանն առնչվող հիմնախնդիրներից և կարևորի յուրաքանչյուրի արձագանքը:

Որպես ներածության ամփոփում, մասնակիցները կդիտեն կարճ տեսահոլովակ, որը ցույց է տալիս, թե ինչպես է հասարակությունը ճնշում կնոջ սեռականությունը՝ հայրիշխանական հասարակության մեջ: Տեսահոլովակի հղումը՝ https://www.youtube.com/watch?v=gXKnXsBWjPs

Մեկնարկ

Ճիշտ և սխալ պնդումներ (տևողությունը՝ 10 րոպե)

Մասնակիցներին ներկայացվում են պնդումներ և այնուհետև յուրաքանչյուր պնդումից հետո մասնակիցները պատասխանում են, արդյոք տվյալ պնդումը

համապատասխանում է իրականությանը, թե՝ ոչ: Յուրաքանչյուր պնդումից հետո դասընթացավարը ամփոփում է և բացատրում է տվյալ պնդման իրողությունը:

1. Առաջին անգամ սեռական հարաբերություն ունենալու ժամանակ նորմալ է, որ կանայք զգում են սաստիկ ցավ և ունենում են հեշտոցային արյունահոսություն:

- Ոչ առաջին, ոչ որևէ անգամ սաստիկ ցավ զգալը նորմալ երևույթ չէ: Եթե կնոջ մոտ ուղեկցվում է ցավ կամ անհարմարություն, կնոջ իրավունքն է դադարեցնել սեռական հարաբերությունը և ունենալ այն ժամանակ, երբ հոգեբանորեն և ֆիզիկապես պատրաստ են: Հեշտոցային արյունահոսությունը կարող է վկայել կոպիտ ներթափանցման կամ այլ խնդրի վերաբերյալ:

2. Նախադաշտանային համախտանիշ գոյություն չունի՝ դաշտանի ժամանակ զգայունությունը նրանից է, որ կանայք զգացմունքային են և անվերահսկելի

- Նախադաշտանային համախտանիշը իրական է, որի պատճառը օրգանիզմում դաշտանով պայմանավորված հորմոնային մակարդակների փոփոխություններն են: Համախտանիշի պատճառները ֆիզիկական են

3. Համապարփակ սեռական կրթությունը դպրոցական տարիքում կարող է ավելորդ հետաքրքրություն առաջացնել դեռահասների շրջանում և առաջ բերել վաղաժամ սեռական հարաբերությունների ցանկություն:

- Համապարփակ սեռական կրթությունը տարիքին համապատասխան ճշգրիտ տեղեկատվության փոխանցումն է գրագետ մասնագետի կողմից, որը ոչ միայն առաջ չի բերում վաղաժամ սեռական հարաբերությունների ցանկություն, այլև պաշտպանում է դեռահասներին տարբեր հմտություններով և ինֆորմացիայով:

4. Հակաբեղմնավորման մեթոդները, այնպիսիք ինչպիսիք են հորմոնալ հաբերը կամ ներարգանդային պարույրը, վնասակար են կնոջ առողջության համար

- Հակաբեղմնավորման մեթոդները ճիշտ ընտրված կնոջ օրգանիզիմի համար որևէ վտանգ չեն առաջացնում կնոջ առողջության տեսանկյունից, եթե օգտագործվում են ճիշտ տարբերակով և պահպանվում են օգտագործման կանոնները և պիտանելիության ժամկետը:

5. Հղիության արհեսական ընդհատումն անպտղություն է առաջ բերում

- Այս առասպելը կա նախկինում անապահով աբորտների տարածվածության հետևանքով: Երբ ապահով աբորտ անելը անհասանելի էր շատ կանանց համար, անապահով աբորտների հետևանքով առաջ եկած բարդացումները ազդել են կնոջ վերարտադրողական համակարգի վրա: Ոչ մի գիտական ապացույց չկա, որ ապահով և պրոֆեսիոնալների կողմից իրականացվող աբորտները առաջացնում են անպտղություն:

6. ԼԳԲՏ+ անձինք իրենք են ընտրում իրենց կողմնորոշումը: Եթե նրանք ցանկանան կարող են հետերոսեքսուալ լինել:

- Մարդկանց մեծամասնությունը իրենց սեռական նախապատվությունների մասին պատկերացում է կազմում վաղ պատանեկության տարիներին՝ առանց սեռական կյանքի փորձ ունենալու:

Դասընթացավարը ներկայացնում է խմբի անդամներին ինչ է սեռականությունը, տալիս է սեռականության սահմանումը, նշում է, որ յուրաքանչյուր մարդ ծնվում է սեռականությամբ և յուրաքանչյուր տարիքային խմբում մարդու մոտ սեռականությունն արտահայտվում է իր հատուկ շեշտադրումներով: Նշել սեռականության կարևոր փուլերը՝ նորածնային փուլ/արտաքին աշխարհը ճանաչելու փուլ/, 1-3 տարեկանի փուլ/հարցադրումների և մարմնի ճանաչողության փուլ/, դեռահասության փուլ/կարևոր փոփոխություններ/, երիտասարդության փուլ, միջին տարիք, տարեց անձանց սեռականության փուլ/ուշադրության և հոգատարության կարիք/:

Վարժություն: Այնուհետև անցում է կատարվում սեռական առողջություն և սեռական իրավունք թեմաներին: Մասնակիցները բաժանվում են 4 խմբերի, իսկ եթե խմբի անդամները 20 հոգուց քիչ են, ապա 2 խմբերի: Խումբ 1-Սեռական առողջություն, Խումբ 2-Սեռական իրավունք, Խումբ 3-Վերարտադրողական առողջություն, Խումբ 4-Վերարտադրողական իրավունք, իսկ եթե մասնակիցները քիչ են, ապա Խումբ 1,2-ը միանում են, Խումբ 3,4-միանում են: Յուրաքանչյուր խումբ մեկ ֆլիպ չարտի վրա սահմանում է տվյալ հասկացությունը, ինչպես նաև նշում է, թե ինչ կարևոր կետեր են պարունակում տվյալ հասկացությունը, այնուհետև խմբի մեկ անդամ ներկայացնում է խմբի մյուս անդամներին: Դասընթացավարն ամփոփելով յուրաքանչյուր հասկացությունը ավելացումներ է անում, եթե դրա կարիքը լինում է և ամփոփում է վարժությունը:

Կարևոր է հաշվի առնել, որ սեռական առողջության և սեռական իրավունք բաժնում մասնակիցները ներկայացնեն կամ դասընթացավարն անդրադառնա հետևյալ կարևոր գաղափարներին՝

- Մարմնի անձեռնմխելիության իրավունք,/օրինակ բերել, որ յուրաքանչյուր կին ինքը պետք է որոշում կայացնի իր մարմնի ընտրություններում,օրինակ ծննդաբերության ընթացքում որ ամեն բան որոշում է բժիշկը և այլ օրինակներ/
- Ազատ լինել տարբեր տեսակի վտանգավոր, անմարդկային, դաժան տեսակի բուժումից և պատիժներից,/խոսել կանանց թլպատումից և ի համեմատական տանելով տղամարդկանց թլպատման մասին, բացատրել, որ համեմատելի չեն, քանի որ տարբեր պատճառներով են իրականացվում և օրինակ տղամարդու թլպատումը նույն հետևանքները չի առաջացնում, ինչ կնոջ սեռական օրգանների թլպատումը, ներկայացնել, որ կանանց թլպատումները լինում են 3 տեսակի/
- Սեռական բռնությունից զերծ մնալու իրավունք,
- Գաղտնիության իրավունք (privacy),/խոսել կարմիր խնձորի ավանդույթի մասին, որպես խախտում/
- Տեղեկատվության իրավունք
- Սեռական կրթության իրավունք
- Սեռական հարաբերություններ ունենալու կամ չունենալու ազատ ընտրության իրավունք/խոսել տարբեր կարծրատիպերի մասին, թե ինչու տղամարդկանց խրախուսվում է ունենալ, իսկ կանանց ոչ մինչամուսնական սեռական հարաբերություններ, խոսել պատրաստ լինելու կարևորության մասին և ինքնուրույն որոշում կայացնելու մասին/
- Զուգընկերոջ ազատ ընտրության իրավունք/խոսել սեռական կողմնորոշման մասին/
- Սեռական հաճույքի իրավունք/խոսել կնոջ սեռական հաճույքի կարևորման մասին/
- Սեռավարակներից զերծ մնալու իրավունք/խոսել կանանց խոցելիությունից սեռավարակների հանդեպ և որ տղամարդիկ շատ հաճախ վարակում են դիտավորյալ/

- Բուժհաստատությունների հասանելիության իրավունք/խոսել ինչպես աշխարհագրական հասանելիության կարևորությունից, այնպես էլ գաղտնիության պահպանման տեսանկյունից/:

Ինչպես նաև սեռական առողջությունը սահմանելիս, անհրաժեշտ է նշել, որ սեռական առողջությունը մարդու առողջության կարևոր բաղադրիչ մասն է կազմում և մարդը համարվում է առողջ, երբ թե ֆիզիոլոգիական, թե հոգեբանական, թե սոցիալական, թե հոգևոր, թե սեռական գործոնները բարեկեցիկ են համարվում: Եվ եթե որևէ բան խախտվում է մարդու սեռական առողջության ոլորտում, ապա դա անդրադառնում է ընդհանուր առողջության վրա և հակառակը: Օրինակ բերել պատերազմական շրջանում կանանց դաշտանի հետ կապված խնդիրների տարածմանը:

Վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքներին անդրադառնալիս կարևոր են հետևյալ հասկացությունների շեշտադրումները՝

Վերարտադրողական իրավունքները ներառում են բոլոր զույգերի և անհատների ազատ պայմաններում որոշելու իրենց երեխաների թիվը, ժամկետները և դրանց միջև ընկած միջակայքը, որոնք հենված են ճշգրիտ տեղեկության վրա և ներառում են խտրականությունից, հարկադրանքից և բռնությունից զերծ վերարտադրությանը վերաբերող որոշումներ կայացնելու իրավունքը.

- Տեղեկատվության իրավունք վերարտադրողական առողջության թեմաների շուրջ
- Անվտանգ հղիության և ծննդաբերության իրավունք/խոսել պրո-նատալիստ մոտեցումների մասին և որ ինչպես են կանանց ստիպում շատ երեխաներ ունենալ առանց հաշվի առնելու իրենց ցանկությունը և անվտանգությունը, ինչպես նաև խոսել հետ-ծննդաբերական պրոցեսի կարևորումից/
- Հակաբեղմնավորման մեթոդների հասանելիության իրավունք/խոսել առկայության, տեղեկատվության, գաղտնիության մասին/
- Համապատասխան բուժծառայությունների հասանելիության իրավունք/խոսել, որ ապահովված պետք է լինեն բոլոր բուժկենտրոնները

տեխնիկապես և մարդկային ռեսուրսներով/

- Հարկադիր ստերիլիզացումից ազատ լինելու իրավունք/խոսել տարբեր նախապաշարումներից, երբ մարդիկ կնոջ փոխարեն որոշում են կայացնում ստերիլիզացնել կնոջը առանց վերջինիս ցանկությունը հաշվի առնելու/
- Հղիության արհեստական ընդհատման (աբորտ) իրավունք/խոսել որպես կնոջ հիմնարար իրավունք, ընտրություն, կնոջ վերջնական որոշում, եռօրյա պարտադիր սպասելաժամանակ, արգելիք հետևանքներ, տղայի նախապատվությամբ իրականացվող աբորտների հիմնախնդիրներ/:

Ներկայացվում է ՀՀ-ում վերարտադրողական իրավունքի կարգավորումները հղում անելով՝ Մարդու վերարտադրողական առողջության եվ վերարտադրողական իրավունքների մասին օրենքին[2]: Քննարկվում են Հոդված 4,5,6,8,10, և 15 հոդվածները (տևողությունը՝ 40 րոպե):

Մասնավորապես Հոդված 4. Վերարտադրողականությունը և մարդու իրավունքները.

1. ինքնուրույն տնօրինել իր սեռական ու վերարտադրողական կյանքը, եթե դա չի վտանգում այլոց առողջությանը.
2. ընտանիք կազմել, ինքնուրույն որոշել իր երեխաների թիվն ու նրանց ծնվելու ժամկետները և այդ նպատակով ունենալ պտղաբերության կարգավորման ապահով ու արդյունավետ ծառայություններից օգտվելու հնարավորություն.
3. պաշտպանված լինել ճնշման բոլոր ձևերից, այդ թվում՝ սեռական շահագործումից և բռնությունից, հարկադրական հղիությունից, աբորտից, ամլացումից և վերարտադրողականության իրավունքների այլ խախտումներից.
4. ստանալ հավաստի և ամբողջական տեղեկատվություն սեռական և վերարտադրողական առողջության հարցերի շուրջ, այդ թվում՝ պտղաբերության կարգավորման առկա մեթոդների առավելությունների, արդյունավետության և հնարավոր վտանգների վերաբերյալ.
5. տանալ բժշկական խորհրդատվություն և ծառայություններ սեռական և վերարտադրողական առողջության հարցերի շուրջ՝ մեկուսի ու գաղտնի

[2] Տե՛ս https://www.arlis.am/documentview.aspx?docid=87128

պայմաններում.

6. օգտվել բարձրորակ բուժկանխարգելիչ ծառայություններից և պաշտպանված լինել առողջության համար վտանգ ներկայացնող մեթոդների, այդ թվում՝ գիտական փորձերի կիրառումից.

7. ինքնուրույն որոշումներ կայացնել սեռական և վերարտադրողական առողջության հետ կապված բժշկական միջամտություններ ստանալիս, բացառությամբ կյանքին սպառնացող շտապ միջամտություն պահանջող իրավիճակների և օրենքով նախատեսված այլ դեպքերի.

8. գտվել վերարտադրողականության նոր տեխնոլոգիաներից, ներառյալ՝ պտղաբերության կարգավորման ապահով և արդյունավետ մեթոդներից, ինչպես նաև անպտղության բուժման համար կիրառվող վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից:

Հաջորդիվ ներկայացվում է Հոդված 5. «Դեռահասների սեռական դաստիարակություն»: Այս մասով քննարկվում է իրավիճակը ՀՀ-ում: Այնուհետև ներկայացվում է համապարփակ սեռական դաստիարակության հայեցակարգը ինչպես նաև դրա վերաբերյալ Առողջապահության համաշխարհային կազմակերպության սկզբունքները: Դասընթացավարը կարող է օգտվել serakanutyun.org վեբկայքի ռեսուրսներից:

Հաջորդիվ ներկայացվում է Հոդված 6. «Անվտանգ մայրություն»: Մասնակիցներին ներկայացվում է սրա վերաբերյալ իրավիճակը և հիմախնդիրները Երևանում և մարզերում:

Այնուհետև քննարկվում է Հոդված 8. «Բեղմնականխման միջոցների օգտագործումը»: Ներկայցվում է երկրում իրավիճակը, հիմանխնդիրները և ազատ որոշումներ կայացնելու ընտրության խոչընդոտները, մասնավորապես հակաբեղմնավորման մեթոդների հասանելիության խոչընդոտները և գաղտնի պայմաններում խորհրդատվություն ստանալու խոչընդոտները:

Ընդմիջում (տևողությունը՝ 15 րոպե)

Ընդմիջումից հետո քննարկվում են այն սոցիալական և կենսաբանական գործոնները, որոնք կանանց ավելի խոցելի են դարձնում սեռավարակների նկատմամբ (տևողությունը՝ 10 րոպե):

Սեռավարակներով հիվանդանում են ինչպես կանայք, այնպես էլ տղամարդիկ,

սակայն կան մի շարք պատճառներ, որոնք կանանց առավել խոցելի են դարձնում սեռավարակների նկատմամբ[3]:

- կենսաբանական գործոններ. հեշտոցի պատերն ավելի մեծ մակերես ունեն, քան առնանդամը, որի պատճառով կանանց մոտ վարակումն ավելի հավանական է: Երիտասարդ աղջիկները՝ մինչև 25 տարեկան, և 45-ից վեր կանայք ավելի խոցելի են, որովհետև արգանդի վզիկի առաձգականությունը փոխվում է այս տարիների ընթացքում և վարակներն էլ ավելի հեշտ են փոխանցվում: Կանանց և աղջիկների դեպքում ոչ միայն սեռավարակ ձեռք բերելու հականականությունն է ավելի մեծ, այլ նաև ձեռք բերելու դեպքում առկա լուրջ բարդություններն և առողջական խնդիրներն են ավելի բարդ: Տղամարդ-կին անպաշտպան սեռական հարաբերության ժամանակ տղամարդու սերմնահեղուկը կնոջ հեշտոցում կարող է մնալ և ակտիվ լինել 5-7 օր, որի ժամանակ կարող է վարակել:Իսկ տղամարդը, եթե չի վարակվում կնոջից սեռական հարաբերություն ունենալու պահին, այլևս չի կարող վարակվել:

- սոցիալական գործոններ. սա կանանց դարձնում է ավելի խոցելի: Այն մշակույթներում, որտեղ իշխում են տղամարդիկ, կանայք ավելի զիջող են, և նրանց համար դժվար է հրաժարվել անցանկալի սեռական հարաբերությունից և իրենց զուգընկերներին առաջարկել պահպանակի օգտագործել: Շատ կանանց համար սեռական բռնության վախը և ֆինանսական կախվածությունը տղամարդուց դժվարեցնում է անվտանգ սեռական հարաբերություն պահանջելը: Մեծ է նաև արտագնա աշխատողներից վարակների փոխանցման (խոպան գնալու) հարցը: Շատ արտագնա աշխատողներ հետ են գալիս վարակված ու վարակում են նաև իրենց կանանց, քանի որ ավելի հաճախ են ներգրավված լինում անպաշտպան սեռական կապերի մեջ. հասարակության մեջ տղամարդու դավաճանությունը համարվում է նորմալ և բնական երևույթ:

Անցում է կատարվում հղիության արհեստական ընդատման (աբորտի) մասին քննարկման (տևողությունը՝ 40 րոպե): Քննարկվում է Հոդված 10. «Հղիության արհեստական ընդհատման իրավունք», մասնավորապես, աբորտի դիմելու օրինական ժամկետներ և մասնավոր դեպքերը: Այնուհետև քննարկվում է եռօրյա սպասելաժամանակը և բժշկական կողմնակալ խորհրդատվությունը, աբորտի հասանելիության խոչընդոտները, բուժաշխատողների խտրական մոտեցումները: Այնուհետև քննարկվում է անապահով պայմաններում աբորտի իրականացման պատճառները և վտանգները: Վերջում քննարկվում է տղայի

[3] Տե՛ս https://bit.ly/3xFPfKJ

նախապատվությամբ իրականացվող աբորտները, դրանց սոցիալական պատճառները: Այս դեպքում կարևոր է շեշտը դնել կնատյացության և սեքսիզմի գերակայության վրա, որպես աբորտի այս տեսակի դիմելու պատճառ:

Վերջում քննարկվում է Հոդված 15. «Փոխնակ մայրության մասին օրենքը», մասնավորապես թե ով կարող է դառնալ փոխնակ մայր, ինչ պայմաններ գոյություն ունեն ու ֆեմինիստական տեսանկյունից ներկայացվում է, թե ինչ հիմնախնդիրներ (տևողությունը՝ 10 րոպե):

Որպես այս հատվածի ամփոփում, մասնակիցները կդիտեն այս կարճ տեսահոլովակը, որն անդրադառնում է կանանց վերարտադրողական իրավունքների իրացմանը Հայաստանում: Տեսահոլովակի հղումը՝ https://www.youtube.com/watch?v=5rodin0kmC4

Ամփոփում և ավարտ (տևողությունը՝ 30 րոպե)

Խմբային աշխատանք. Կինը և ոչ խտրական բուժսպասարկումը
Մասնակիցները բաժանվում են երեք խմբի և նրանց յուրքանչյուրին տրվում են սցենարներ կանաց տարբեր խմբերի բուժհաստատություններից օգտվելու մասին: Առաջինը՝ գյուղաբնակ կին է, որը ցանկանում է աբորտի դիմել: Երկրորդը լեսբի կին փորձում է անցնել գինեկոլոգիական հետազոտություն, և երրորդը՝ ՄԻԱՎով ապրով կին է, ով փորձում է ստանալ բուժօգնություն: Պատմություններ ը վերցնել «Կանանց չլսված ձայներ» (2019) գրքույկից: Մասնակիցները 7 րոպե իրար մեջ քննարկելուց հետո, պետք է կարողանան նշմարել խտրական վերաբերմունքը, ինչպես նաև բուժսպասարկման որակի և հասանելիության հետ կապված խնդիրները: Այնուհետև 15 րոպե քննարկում ամբողջ խմբի հետ յուրաքանչյուր պատմության վերաբերյալ:

ԿԱՆԱՅՔ, ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Տևողությունը՝ 3 ժամ

Նպատակը՝

Դասընթացի նպատակն է մասնակիցներին ծանոթացնել կանայք, խաղաղություն և անվտանգություն օրակարգին: Դրա ավարտին մասնակիցները

պետք է կարողանան տարբերակել բոլոր այն սոցիալ-տնտեսական պատճառները որոնք կանանց որպես խումբ դարձնում են խոցելի զինված հակամարտությունների ժամանակ, ունենան համապարփակ պատկերացում խաղաղության, խաղաղաշինության և անվտանգության մասին: Ինչպես նաև տեղյակ լինեն ՄԱԿ ԱԽ N1325 բանաձևի կարգավորումներից և ազգային մակարդակում դրա իրացումից:

Մեկնարկ

Վարժություն. Ի՞նչ է խաղաղությունը (տևողությունը՝ 10 րոպե)

Մասնակիցները, խմբերի բաժանվելով, քննարկում են, թե ինչ է «խաղաղություն»-ը, սահմանում են, նշում են բնորոշ հատկանիշները: Կարճ 5-7 րոպե ներկայացում և քննարկում: Պետք է ֆլիպ չարտ և գունավոր մարկերներ:

Սկսվում է մասնակիցներին կոնֆլիկտի սահմանումը տալով: Այնուհետև մասնակիցներին բացատրվում է դասընթացի երկու հիմնական հասկացությունները՝ խաղաղություն և անվտանգություն (տևողությունը՝ 20 րոպե):

Խաղաղության սահմանումը. երբ մարդիկ ի վիճակի են լուծել իրենց կոնֆլիկտները առանց բռնության, կարողանում են աշխատել միասին՝ իրենց կյանքի պայմանները լավացնելու նպատակով:

- Բոլորն ապրում են անվտանգության մեջ՝ առանց բռնության նկատմամբ վախի: Բռնության ոչ մի տեսակ չի հանդուրժվում օրենքով:
- Բոլորն օրենքի առջև հավասար են, առկա է վստահելի արդարադատության համակարգ, արդար և արդյունավետ օրենքները պաշտպանում են մարդկանց իրավունքները:
- Բոլորը կարող են մասնակցել որոշումների կայացման գործընթացին, կառավարությունը հաշվետու է մարդկանց առջև:
- Սնունդը, մաքուր ջուրը, կացարանը, կրթությունը, առողջապահությունը հասանելի են բոլորին հավասարապես:
- Բոլորն ունեն աշխատելու հավասար հնարավորություններ՝ անկախ գենդերից, էթնիկ ծագումից և այլն:

Մասնակիցներին բացատրվում է խաղաղարարություն, խաղաղաշինություն, խաղաղապահություն հասկացությունների հասկացությունների տարբերությունը:

- Խաղաղարարություն՝ ներառում է պաշտոնական բանակցային/դիվանագիտական գործընթացները կամ այն գործընթացները, որոնք կոչված են հակամարտող կողմերին բերել բանակցային սեղանի շուրջ:
- Խաղաղաշինություն՝ ներառում է խաղաղության հասնելու գործողություններ, որոնք իրականացվում են ոչ միայն պաշտոնատար, այլև ոչ պաշտոնատար անձանց կողմից (ոչ պետական կազմակերպություններ, անհատ ակտիվիստներ և այլն): Միջոցառումները թիրախավորում են հասարակության տարբեր շերտերին, կրում են լայնածավալ և տևական բնույթ:
- Խաղաղապահություն՝ հեշտացնել կոնֆլիկտային վիճակից խաղաղ վիճակին անցում կատարելու գործընթացը:

Խաղաղության կառուցումը պահանջում է հստակ պատկերացում այն մասին, թե ինչն է ստեղծում խաղաղություն և անվտանգություն տարբեր մշակույթների, ազգերի, էթնոսների և գենդերների մեջ:

Հիմնական կարիքներն են.

- Աջակցություն տարրական անվտանգության ապահովման գործընթացներին, որը ներառում է ականազերծման գործընթացները, խաղաղ բնակչության պաշտպանությունը, զինաթափումը, զինված ուժերի ապակենտրոնացումը և վերաինտեգրումը, օրենքի գերակայության հաստատումը և անվտանգության ոլորտի բարեփոխումները:
- Աջակցություն կարևորագույն ծառայությունների ապահովմանը. ջրամատակարարում, հիգիենա, առողջություն և տարրական կրթություն և փախստականների և ներքին տեղահանված անձանց (ՆՏԱ) անվտանգ վերադարձ:
- Աջակցություն քաղաքական գործընթացներին. ընտրություններ և ընդգրկուն բանակցային գործընթացներ, հանրային ծառայությունների վերականգնում:
- Աջակցություն տնտեսական իրավիճակի բարելավմանը. աշխատատեղերի ստեղծում, հատկապես երիտասարդության, կանանց և նախկին

մարտիկների համար:

Խմբային աշխատանք (տևողությունը՝ 20 րոպե)

Խաղի նպատակն է անդրադառնալ գենդերային հիմք ունեցող բռնություններին և դրանց ազդեցությանը և ազդեցությունների տարբերություններին խաղաղ և կոնֆլիկտային իրավիճակներում: Մասնակիցները բաժանվում են 4-5 հոգանոց խմբերի, յուրաքանչյուր խմբին տրվում է ստորև ներկայացված աղյուսակը: Նրանք պետք է այն լրացնեն, այնուհետև՝ ներկայացնեն:

Խաղի միջոցով հնարավոր է դառնում խորքային քննարկել բռնության յուրաքանչյուր տեսակի տրանսֆորմացիան պատերազմների ժամանակ: Ավելին, խաղի միջոցով հնարավոր կլինի ամփոփել նախորդ դասընթացներից ստացված գիտելիքները:

	Խաղաղ ժամանակներում	Պատերազմական իրավիճակում	Հետպատերազ-մական իրավիճակում
Կանանց նկատմամբ ֆիզիկական բռնության տեսակները			
Կանանց նկատմամբ հոգեբանական բռնության ձևերը (ճնշումներ, սահմանափակումներ, բանավոր վիրավորանքներ և այլն)			

Համակարգային բռնություն			

Անցում է կատարվում պատերազմի մասին քննարկման (տևողությունը՝ 20 րոպե) : Նախ ներկայացվում են դրա հիմանական մասնակիցները՝ կանայք, տղամարդիկ, երեխաները և այլոք: Այնուհետև ներկայացվում են կանանց նկատմամբ բռնության ձևերը: Նախ ներկայացվում է, թե ինչու են կանայք որպես խումբ տարանջատվում՝ կանանց իրավունքները ոտնահարվում են ոչ միայն պետության, այլև՝ այլ սուբյեկտների կողմից: Կնոջ ինքնությանը ավելանում են նաև այլ բնորոշիչներ՝ ռասա, էթնիկ պատկանելություն, սեռական կողմնորոշում, կրոն և այլն: Քննարկվում են մշակութային արժեքները և սովորույթները և շեշտվում, թե ինչպես է կանանց նկատմամբ բռնությունը արմատավորված է համաշխարհային մշակույթում:

Այնուհետև ներկայացվում է զինված հակամարտությունների ժամանակ կանանց իրավիճակը:

- Կանայք հիմնականում ներկայացվում են որպես պատերազմի զոհեր. սա նսեմացնում է հասարակության մեջ կանանց ունեցած դերը
- Կանայք հակամարտության ակտիվ անդամներ են. 1990թ-ից մինչև 2003թ-ը կանայք ավելի քան 38 զինված հակամարտությունների են մասնակցել:
- Հետպատերազմյան իրավիճակում կանայք կորցնում են պատերազմում ձեռք բերած իրենց դիրքերը:

Եվ անցում է կատարվում կանանց որպես խումբ թիրապավորելու առանձնահատկություններին.

- Համարվում են ազգի վերարտադրողականությունն ապահովողներ,
- Համարվում են ընտանիքի խնամողներ,
- Գենդերային կարծրատիպեր և անհավասարություն,

- Պատերազմական մարտավարության մաս:

Այնուհետև քննարկվում է բռնաբարությունը որպես պատերազմական զենք (տևողությունը՝ 20 րոպե):

Ներկայացվում է, որ զինված հակամարտությունների ժամանակ բռնաբարությունը ռազմական հանցագործություն է: Դրա առանձնահատկությունը այն է, որ.

- Շարունակական բնույթ են կրում. հետպատերազմական իրավիճակ
- Ոչ միայն բռնաբարություն, այլ սեռական բնույթի այլ ոտնձգություններ
- Օգնություն ցուցաբերելու դժվարություններ. ռեսուրսների
- Բացակայություն, լեզվի չիմացություն, անկարողություն և այլն:

Այնուհետև քննարկվում են դրա նպատակները.

- Վախի ներշնչում և գերիշխող դիրքի հաստատում
- Նվաստացում (ինչպես զոհին, այնպես էլ այն համանյքին և անձին, որոնց զոհը
- «ներկայացնում» է)
- Էթնիկ խմբի տեղահանում և էթնիկ զտում
- Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների տարածում (Ռուանդա)
- Խեղում. Սեռական օրգանների հեռաց վերարդրողականությունը կանգնեցնելու նպատակով
- Բռնաբարություն հղիացնելու նպատակով
- Ինչպես մեծածավալ, այնպես էլ փոքրածավալ ռեսուրսների տիրապետում
- Կանանց տարանջատում՝ գեղեցիկներ և տգեղներ
- Հարկադիր մարմնավաճառություն

Այստեղ հարկավոր է ներկայացնել վիճակագրական տվյալներ, հատկապես Բալկանյան պատերազմներից:

- Պատերազմի և եղեռնի գրանցման Զենիցիայի կենտրոնը մինչև 1993թ-ը Բոսնիա-Հերցեգովինայում արձանագրել է պատերազմական

բռնաբարության 40,000 դեպք:

- 1999թ-ին սոցիարցման ենթարկված կանանցից 39%-ը ենթարկվել է բռնաբարության 1994թ-ի եղեռնի ժամանակ, և 72%-ը ասել է, որ իր շրջապատում ճանաչում է բռնաբարության ենթարկված ինչ-որ մեկի: Մոտավորապես 23,300-ից մինչև 45,600 կոսովոալբանացի կին բռնաբարվել է 1998-1999 թթ-ն ընկած ժամանակահատվածում: 2000 թ-ին տեղի ունեցած հետազոտության ժամանակ հետազոտողները պարզեցին, որ մոտավորապես 50,000-64,000 տեղահանված կանայք սեռական ոտնձգությունների են ենթարկվել Սիերա Լեոնեում տեղի ունեցած հակամարտության ժամանակ:

Տեսակը	Տարածված և կանոնավոր	Տարածված և պատեհապաշտ	«Հարազատական» բռնաբարություն
Ո՞վ է բռնաբարում:	Իրականացվում է զինված խմբերի և զինվորների կողմից:	Զինված խմբերը ու սովորական քաղաքացիները՝ օգտվելով ստեղծված հնարավորությունից:	Սա արդեն տեղական հանցագործություն է, որը կամ չունի քաղաքական և անվտանգության խնդիրների հետ:
Ի՞նչ մեթոդներ պետք է ձեռնարկվեն:	Մարտիկներից և խաղաղապահներից պահանջում է կարգապահական մեթոդներ՝ կանանց և աղջիկների անվտանգությունն ապահովելու համար:	Պահանջում է ուժեղացնել դատական համակարգը և պատժիչ մեթոդները:	Պահանջում է ուժեղացնել տեղական օրենքները և իրականացնել գենդերային հիմք ունեցող ծրագրեր:

Այնուհետև քննարկվում են ազդեցության տեսակները: Ֆիզիկական՝ տրավմատիկ վնասվածքներ, սեռական ճանապարհով փոխանցվող

հիվանդություններ, «մայրական մահացելիություն» (երկիմաստություն), անցանկալի հղիություններ, հղիության անապահով ընդհատումներ, վերարտադրողական խնդիրներ: Հոգեբանական կարճաժամկետ և երկարաժամկետ հետևանքներն են՝ վախ, անօգնականություն, տխրություն, խոցելիություն, հուսահատություն, մեկուսացում, ընկճվածություն, անհանգստություն, բազմաթիվ սոմատիկ սիմպտոմներ, հիշողություններ, անքնություն, ինքնախարազանում, նոր հարաբերություններ հաստատելու դժվարություններ, ամոթ, զզվանք, զայրույթ:

Կան մի շարք սոցիալ-հոգեբանական հետևանքներ պատերազմական բռնաբարությունների արդյունքում.

- Համայնքին, ընտանիքին և ամուսնուն հասցված վնաս
- Հոգեբանական խնդիրների պատճառով ընտանիք կազմելու ցանկության վերացում
- Բռնաբարության արդյունքում ծնված երեխաների նկատմամբ առկա բացասական վերաբերմունք
- Հետպատերազմական իրավիճակում կարգավորման մեխանիզմների կիրառման անհնարինություն առկա կարծրատիպերի և արգելքների պատճառով:

Վիճակագրական տվյալներ այս մասով: Ռուանդայում տեղի ունեցած ցեղասպանության ժամանակ բռնաբարվել են 250,000-500,000 կանայք: 2000-5000 կանայք բռնաբարության արդյունքում հղիացել են: Որակվել է որպես ցեղասպանություն, իսկ բռնաբարությունն ունեցել է խիստ կազմակերպված բնույթ: 2010թ. Արևելյան Կոնգոյում տղամարդկանց 20, իսկ կանանց 30%-ը սեռական ոտնձգությունների են ենթարկվել: 200,000-ից ավել մարդիկ, ովքեր ենթարկվել են բռնաբարության, ներկայումս ապրում են Կոնգոյում: Կիվու նահանգի հյուսիսային հատվածում ամեն 5 որպե 4 կին է բռնաբարվում/ենթարկվում սեռական բռնության: Կարելի է նաև անդրադրաձ անել Հայոց ցեղասպանության ժամանակ բռնաբարության ենթարկված կանանց պատմությանը[4]:

[4] Տես https://bit.ly/382WYYy

Եզրափակիչ թեմա է հանդիսանում Մարդկային անվտռանգություն եզրույթի ներկայացումը: Սկզբում ներկայացվում է անվտանգության դասական տարբերակը.

- Առաջնային է եղել պետությունը և պետության ինքնիշխանությունը
- Տարածքային ամբողջականություն, քաղաքական կայունություն, ռազմական ներուժ
- Դասական անվտանգությանն անդրադառնալուց հետո դասընթացավարը ներկայացնում է ժամանակակից անվտանգության հայեցակարգը, որն իրենից էլ հենց ներկայացնում է մարդկային անվտանգության հիմքը.
- Հեռանալ անվտանգության ավանդական, հիմնականում պետականակենտրոն պատկերացումներից և կենտրոնանալ անվտանգության այն մոտեցման վրա, որն ավելի շատ է ուշադրություն դարձնում անհատների անվտանգության, նրանց պաշտպանության և հզորացման վրա:
- Ուշադրություն դարձնել մարդկային կյանքի տարբեր ոլորտներում առկա բազմաթիվ վտանգներին՝ հստակորեն ցույց տալով անվտանգության, զարգացման և մարդու իրավունքների միջև առկա կապը:
- Խթանել նոր, ինտեգրող, համակարգված և մարդակենտրոն մոտեցումներ տարբեր ռազմավարություններում և քաղաքականություններում, որոնք իրենց հերթին կխթանեն դրական խաղաղություն, անվտանգություն և զարգացվածություն ազգերի ներսում և միջև:

Ընդմիջում (տևողությունը՝ 15 րոպե)

Խմբային աշխատանք. Ի՞նչ է անհրաժեշտ խաղաղություն և անվտանգություն ունենալու համար (տևողությունը՝ 25 րոպե)

Այս հատվածում մասնակիցները խմբերով շարունակում են 10 րոպե աշխատել՝ այս անգամ կենտրոնանալով այն քայլերի վրա, որոնք անհրաժեշտ են խաղաղություն և անվտանգություն ունենալու համար՝ հիմնականում կենտրոնանալով տեղական և ազգային մակարդակների վրա: Այնուհետև 15 րոպե ներկայացնում են իրենց մշակած քայլերը:

Խաղի նպատակն է դասընթացի ողջ ընթացքում մասնակիցներին դրդել, որ մտորեն գենդերազգայուն խաղաղության և անվտանգության շուրջ: Խաղի

արդյունքում մասնակիցները կկարողանան դասընթացի ավարտին ունենալ գործողությունների ծրագիր, որն էլ խթան և հիմք կհանդիսանա հետագա փոքր ծրագրերի և ջատագովության համար:

Անցում է կատարվում դասընթացի շահերի պաշտպանության և գործնական մասին (տևողությունը՝ 50 րոպե):

Ծանոթացում «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգին: Ներկայացվում է ՄԱԿ Անվտանգության խորհրդի N1325 բանաձևը: Տեղեկություն բանաձև մասին.

- Ընդունվել է 2000 թ-ի հոկտեմբերի 31-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 4213-րդ նիստում,
- «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգին նվիրված ՄԱԿ

  Ախ առաջին բանաձևն է,
- Ճանաչում է կանանց ակտիվ մասնակցությունը զինված հակամարտություններում,
- Կոչ է անում ՄԱԿ անդամ բոլոր երկրներին ձեռք առնել բոլոր անհրաժեշտ քայլերը որոշումների ընդունման և խաղաղաշինական գործընթացներում բարձրացնել կանանց մասնակցությունը,
- Ստեղծում է համընդհանուր պայմաններ զեկույցների ներկայացման համար,
- Ունի իրավաբանորեն կապող ուժ,
- Միջազգային ճանաչում չունեցող երկրները ևս կարող են զեկույց ներկայացնել:

N1325 բանաձևի դրույթները իրականացվում է Գործողությունների ազգային ծրագրերի (ԳԱԾ) միջոցով: Ներկայացվում է ԳԱԾ-երի ընդունման կարգը, ժամանակացույցը և քաղհասարակությանը տրված գործիքակազմերը (օր.՝

ծրագրի մշտադիտարկում): Այնուհետև քննարկվում են այն մարտահրավերները, որոնք խոչընդոտում են դրույթների իրականացմանը:

- Դրույթների իրականացումը հնարավոր է միայն ԳԱԾ-երի միջոցով
- ՄԱԿԱԽ – պարտադիրության ապահովման մեխանիզմների բացակայություն
- Սուղ ֆինանսական միջոցներ (NO MONEY, NO NAP)

Ավելի շատ օգտագործվում է միլիտարիզմի խորացման, քան կայուն խաղաղության հաստատման գործընթացներում

Այստեղ կարելի է բերել Ուկրաինայի օրինակը:

Գործողությունների ազգային ծրագրեր.

Իրականացումը՝ տեղայնացում՝

- «Թարգմանել» միջազգային իրավական ակտերը և ստեղծել տեղական գործիքակազմներ
- Նպաստում է հաշվետվողականությանը
- Օգնում է առաջնահերթությունների առանձնացմանը
- Համակարգված և մասնակցային մոտեցում

Մարտահրավերները.

- ՔՀԿ-ների թերի ներգրավվածություն
- Արդյունքային ցուցանիշների ոչ հստակություն, դժվարաչափելիություն, հաշվի չեն առնում միջնաժամկետ և երկարաժամկետ ազդեցությունները
- Պետական բյուջեից ֆինանսավորման բացակայություն (NO MONEY, NO NAP)
- Գենդերային թեմատիկա ունեցող այլ ռազմավարություններից բացակայություն

Ամփոփում և ավարտ (տևողությունը՝ 15 րոպե)

- Հետագա քայլերը
- Վերացնել համակարգային խոչընդոտները
- Ստեղծել համընդգրկուն բազմաշերտ մասնակցության հարթակ բոլորի

համար

- Բարեփոխել ընտանեկան բռության/գենդերային հիմք ունեցող բռնության դեմ պայքարի օրենքները և մեխանիզմները
- Տեղայնացնել/լոկալիզացնել գենդերային հավասարության և արդարության ապահովման մեխանիզմները
- Գենդերազգայուն և կոնֆլիկտազգայուն դարձնել մեդիա ոլորտը
- Կին էքսպերտներին ընդգրկել ռազմավարությունների ստեղծման գործընթացներում
- Խթանել սերունդների միջև երկխոսությունը
- Ապահովել կին ակտիվիստների անվտանգությունը
- Անդրադառնալ «նեղացող տարածք» հիմնախնդրին
- Գենդերազգայուն բյուջետավորում
- Ֆոնդերի տրամադրման գենդերազգայուն մոտեցում
- Ստեղծել կանանց համար անվտանգ տարածքներ զգայուն թեմաների քննարկման համար
- Ստեղծել պատերազմական հանցագործությունների կանխարգելման, արձանագրման և հաղթահարման մեխանիզմներ
- Բարձրացնել հասարակության իրազեկվածությունը. Ստեղծել հետազոտական բազա
- Ուսումնասիրել գենդեր – ռազմականացման (միլիտարիզմ) կապը
- Հակամարտություններն ուսումնասիրել ֆեմինիստական մոտեցմամբ
- Գենդերազգայուն դարձնել իրականացվող ծրագրերը, հետազոտությունները և աշխատանքները

ՀԱՎԵԼՎԱԾ. ԴԱՍԸԹԱՑԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԿԱՐ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Գրականության ցանկ

Մարդու իրավունքներ, կանանց աշխատանքային իրավունքներ և կանանց քաղաքական մասնակցություն

1. ՀՀ աշխատանքային օրենսգրքի վերլուծությունը գենդերային զգայունության տեսանկյունից և փոփոխությունների առաջարկների փաթեթը. [Քաղաքական փաստաթուղթ]. Տես՝ https://bit.ly/3y2iW9d
2. «Խտրականության դեմ պայքարի և հանուն հավասարության» կոալիցիա. (n.d.). Շտեմարան. Havasar.am
   Retrieved April 22, 2022, from http://havasar.am/

Գենդեր և Գենդերային բռնություն

1. Դավթյան, Ս. (2021) Գենդերային բռնության հիմնական առանձնահատկությունները. Երևանի պետական համալսարան. Տես՝ https://bit.ly/3MG1qvx
2. Դավթյան, Ս և Հովհաննիսյան Ա., (2016) Ֆեմինիստական մոտեցման առանձնահատկությունները սոցիալական աշխատանքի և հոգեբանական խորհրդատվության մեջ, Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն. Հասանելի է ԿՌԿ և ՍԲՃԿ գրադարաններից
3. Փիլիպոսյան Ն., Դավթյան Ս. և Հովհաննիսյան Ա. (2018) ՀՀ-ում Սեռական Բռնության Իրավիճակի Վերլուծություն: Սեռական Բռնության Ճգնաժամային Կենտրոնի Տասնամյա Գործունեության Ամփոփում. Տես՝ https://bit.ly/39bYhoD

Ֆեմինիզմ

1. Ekmekcioglu, L. (2016). Recovering Armenia: The Limits of Belonging in Post-Genocide Turkey. Stanford University Press.
2. Evans, K. (2005). A Guide to Feminist Advocacy. Gender and Development, 13(3), 10–20. http://www.jstor.org/stable/20053159
3. hooks, b. (2014). Feminism is for everybody (2nd ed.). Routledge.

4. hooks, b.. (2000). Feminist theory: From margin to center. Cambridge, MA: South End Press.

5. Khalatyan, M., Manusyan, A. & Margaryan, N. (2020). "ANTI-GENDER CAMPAIGNS, RHETORICS AND OBJECTIVES IN POST-REVOLUTIONARY ARMENIA," 2020, https://socioscope.am/wp-content/uploads/2020/08/2020_Anti-gender-campaigns_-research_Eng-1.pdf.

6. Sosa, L. (2021) "Beyond Gender Equality? Anti-Gender Campaigns and the Erosion of Human Rights and Democracy," Netherlands Quarterly of Human Rights: 3–10, https://doi.org/10.1177/0924051921996697.

ՍՎԱԻ

1. Serakanutyun.org (2016), Կանանց ռեսուրսային կենտրոն.

2. Բալդրան, Ս. (2021). Աբորտի պատմությունը հայկական համատեքստում. [Հետազոտություն]. Կանանց ռեսուրսային կենտրոն ՀԿ. Տես՝ https://bit.ly/3xHBBH3

3. Բոստոնի կանանց առողջության կոլեկտիվ. (2010). Մենք ու մեր մարմինը (Խաչիկյան Մերի, Trans.). Գասպրինտ. Հասանելի է ԿՌԿ գրադարանից:

4. «Կանանց սեռական և վերարտադրողական առողջության և իրավունքների իրացումը Կովիդ-19 համավարակի և արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում» Կանանց ռեսուրսային կենտրոն. Տես՝ https://bit.ly/3xPXReV

5. «Կանանց չլսված պատմություններ» (2020). Կանանց ռեսուրսային կենտրոն ՀԿ. Տես՝ https://bit.ly/3k2WdRX

6. Հղիության արհեստական ընդհատման իրավունքի վերաբերյալ (2021). [Քաղաքական փաստաթուղթ] Կանանց ռեսուրսային կենտրոն ՀԿ. Տես՝ https://bit.ly/3K46Leb

7. Հովհաննիսյան, Ս. (2019). Հղիության արհեստական ընդհատման գործընթացի վերաբերյալ մասնագետների դիրքորոշումները Հայաստանի տարբեր բուժհաստատություններում [Հետազոտություն]. Կանանց ռեսուրսային կենտրոն ՀԿ. Տես՝ https://bit.ly/3ECrXGW

Կանայք, խաղաղություն անվտանգություն

1. Արցախյան պատերազմը և կանանց իրավունքները, (2021).
2. [Ուսումնասիրություն] Կանանց ռեսուրսային կենտրոն. Տե՛ս https://bit.ly/3OvqDKv
3. «Սյուզան Խարտալյան. «Տատիկին դաջվածքները»». (2012). https://www.youtube.com/watch?v=iVnwPGNPV_E
4. Baldoumus, A., Banerjee, P., Bhagwan-Rolls, S., Evans, A., Hersi, A., Kaya, Z., Kezi-Nwoha, H., Smyth, F., & Tonelli, A. (2020). Transforming power to put women at the heart of peace building: A collection of essays. Oxfam. https://bit.ly/3rLvaPd
5. Pray the Devil Back to Hell - Pray the Devil Back to Hell: Theatrical Trailer (2008) Retrieved April 22, 2022, from https://vimeo.com/188872289
6. Unitied Nations Security Council Resolution 1325 (2000) - Women in Armed Conflict. https://www.refworld.org/docid/3b00f4672e.html
7. UNIFEM Resources on Women, Peace and Security | UN Women. (n.d.). Retrieved April 19, 2022, from https://www.unwomen.org/en/digital-library/publications/2010/1/unifem-resources-on-women-peace-and-security

ԿԱՆԱՆՑ ՌԵՍՈՒՐՍԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ